



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





707

708

709

710

82

9-75







ԲՈՅՐԸՆ



Թարգ. բնագրից

Յ. Զ. ՄԻՐՉԱՅԵՆՆԸ




Հրատարակու թիւն

„ՓԱՐՈՍ“ Տպարանի

Թ Է Ն Ե Ա Ն 1 9 1 1

Երազատիւյ Տպր. „ՓԱՐՈՍ“











82

9-75


ԲԱՅՐԸՆ

82



Թարգ. բնագրից

Յ. Զ. ՄԻՐՉԱՅԵԱՆՆԵ



Հրատարակու թիւն

„ՓԱՐՈՍ“ Տպարանի

Թ Է Ի Ե Ա Ն 1 9 1 1

Արագածիայ Տպր. „ՓԱՐՈՍ“



143

7790-57

8



ԾՈՎԱՅԷՆԸ



Ե Փ Ր Ե Մ Ի Ն

Սիրելի Նփրեմ

Այս թարգմանութիւնը, որ գրեթէ ամբողջովին կատարուել է Պարսկաստանի ազատագրութեան շարժման ընթացքում, չէր կարող աւելի յարմար կերպով կրել իր վրայ իր ծննդեան պատմական ժամանակների գրօշմը քան այն՝ որ դարդարուէր քս անուևով — սրովհետև բոլոր քաղաքակրթաւած ազգերի համար սրղէն փաստ է, որ այդ անուան տէրը միաժամանակ ամենից խոշոր զէմքն է և ամենից իղէալական որդին Պարսկաստանի յեղափոխութեան:

Ընթերցողն, անշուշտ, համեատութեան պակասութիւն կը համարէ այն հանգամանքը, որ ևս ուղում եմ յաւերժացնել իմ խեղճ գործը մի անուևով, որ սահմանուած է մշտական և փառաւոր տեղ բանելու աւելի քան մէկ տղղի պատմութեան էջերում, բայց ոչ որ անկեղծութեան պակասութիւն չէ կարող գանել



այն հիացմունքի մէջ որ ևս տածում ևմ գէպի  
քո հերոսական գործերը:

Գուցէ ոմանք թիչ աւնչութիւն տեսնեն  
քո և „ Ծովահէնի “ մէջ և այդ պատճառով  
այս ձօնը սեպեն անտեղի, բայց ևս յարաբե-  
րութիւնը գտնում ևմ շատ մեծ թէ համան-  
մանութեան և թէ հակամանութեան տեսա-  
կէտից:

« Վհատութեան գպրոցում

Ծուկ նորան այս աշխարհ. . . »

և Կոնստպ գարձաւ խորշակուած հոգով մի  
անուղղելի և անպարտելի մարդատեաց:

Տժրախտութեան բովի մէջ

Կըսել է քեզ այս աշխարհ,

և դու գարձել ևս բեղմնաւոր գործերով մի  
անթերելի և յաղթական մարդասէր:

Ընդունիր ուրեմն այս նուէրը — սրբան  
էլ աղբատ — իբրև յիշատակ հարուստ և դե-  
ղուն գգացումների:

Յ. Չ. Միրզայեանց

Թէհրան

Յունիսար 1911



# ՀԵՂԻՆԱԿԻ ԶՕՆԸ

1814

## ՊԵՐՈՆ ԹՈՎՄԸՍ ՄՕՂՐԻՆ

Իմ Սիրելի Մօրը

Ես նուիրում եմ ձեզ իմ վերջին արտա-  
գրութիւնը — մինչև մի քանի տարի — որով  
եւս մեղանշում եմ հասարակութեան համբե-  
րութեան և ձեր ներողամտութեան գէմ: Խոս-  
տովանում եմ, ինձ անձկութիւն է պատճա-  
ռում այն հանգամանքը, որ ես օգտում եմ  
այս վերջին և միակ պատեհութիւնից զար-  
գարելու իմ էջերը մի անունով, որ նուիրա-  
գործուած է անյողողող հասարակական սկզ-  
բունքներով և անկասկածելի ու բազմապիսի  
տաղանդներով: Այն ինչ Իրլանդան ձեզ դա-  
սում է իր ամենից անգրգուելի հայրենասէր-  
ների շարքում, այն ինչ նրա գնահատութեամբ  
դուք բանում էք միակ առաջին տեղը նրա  
գուսանների մէջ և Քրիտանիան կրկնում ու  
վաւերացնում է նրա վճիռը, թոյլ տուէք մէ-  
կի, որի միակ ափսոսանքը, մեր ծանօթու-



Թեան առաջին օրից ի վեր, եղի է այն առ-  
բիները, որ նա կորցրել է գրանից առաջ,  
միացնել իր խոնարհ բայց անկեղծ բարեկա-  
մական հիացմունքը աւելի քան մէկ ազգի  
ձայնին: Այդ հանգամանքը դէժ ձեզ համար  
կը ծառայէ որպէս մի փոստ թէ ևս ոչ մո-  
ռացել եմ ձեր ընկերութիւնից ստացած բա-  
ւականութիւնը, և ոչ լքանել այն յոյսը թէ  
նորից կարժանանամ այդ բախտին, երբոր ձեր  
աղաւ ժամանակը կամ ձեր հաղումը ձեզ թոյլ  
տայ քուել մի շափաղանց երկարատե քացա-  
կայութեան յանցանքը ձեր բարեկամների ա-  
ռաջ: Այդ բարեկամների շրջանում տաւում է  
— և յոյս ունիմ որ ոչ անհիմն կերպով — թէ  
դուք դրողուած էք մի բանաստեղծական եր-  
կի շարադրութեամբ, որի տեսարանը աւնուած  
է արեւելքից: Ոչ սք չէ կարող այդ պատկեր-  
ները աւելի լաւ նկարագրել քան դուք: Ձեր  
հայրենիքի կրած զրկանքները, նրա օրդկանց  
կրակոտ և վեհապանծ սգին, նրա դստերց  
դեղեցկութիւնը և վառ զգացումը այնտեղ  
միայն կարելի է գանել: Քալիֆնդ, երբոր իւր  
արեւելեան հովուերգութիւնները կոչեց Իրլան-  
դական հովուերգութիւններ, չը գիտէր թէ



իր բերած նստնութիւնը, գէթ մասամբ, որքան  
ճիշդ է: Չիր երեւակայութիւնը կստեղծ է մի  
աւելի տար արեւ և պակաս ամպամած երկինք:  
Բայց վարթութիւնը, փափկութիւնը և ինք-  
նուրոյնութիւնը մի մասն է ձեր ազգային  
բնասրութեան՝ ժառանգարար ստացում ձեր  
արեւելեան ծագումից — ծագում՝ առ որն ու-  
նեցած ձեր իրաւունքը դուք արզէն ապացու-  
ցել էք աւելի պարզ կերպով քան ձեր երկրի  
ամենահռանդուն հնազէտը:

Թոյլ կըրտմք ինձ մի քանի խօսք էլ  
աւելացնել մի նիւթի մասին, որի վերաբեր-  
մամբ ամեն ոք համարում է դիւրախօս և ոչ  
որ՝ հաճելի — Եսը: Ես գրել եմ շատ և հրա-  
տարակել եմ աւելի քան այն շափը, որ բա-  
ւական կը լինէր ինձանից պահանջելու մի  
նայնքան երկարատեւ լաութիւն, որ այժմ խոր-  
հում եմ պահպանել: Բայց մինչև մի քանի  
տարի ես մտադիր եմ այլևս չը փորձել դա-  
տարձիւր « առտուածների, մարդկանց կամ  
սիւնակների »: Այժմեան քերթումը ես գրել  
եմ ոչ թէ ամենազօրար, այլ այն շափով,  
որ ամենից յարմար է մեր լեզուին — այն է  
բարի, հին հերոսերգակ երկատղը: Սպէնսէրի



հատուածները գուցէ շափաղանց դանդաղ և շափաղանց փառահեղ են պատմական սճի համար, թէև խոստովանում եմ որ այդ շափը իսկ և իսկ իմ սրտի ուզածն է: Միայն Սկոտն է որ այժմեան սերունդի մէջ կարողացել է կատարելապէս յաղթել ութ վանկեան շափի մահացու դիրուիթեանը, և դա ամենափարբիկը չէ նրա բեղմնաւոր և հզօր հանճարի տարած յաղթանակների: Անյանգ սառնաւորի մէջ, Միլտանը, Թոմասը և մեր թատերագակները այն լոյսերն են, որ փայլում են ծովի եզերքին, բայց դպուչացնում են մեզ գաժան և անբերրի ժայռից, որի վրայ վառուել են նորա: Հերոսական երկտողն անտարակոյս ամենաժողովրդական շափը չէ, բայց բանի որ ես չը շեղուեցի գէպի միւսը այն նպատակով որ հաճոյացած լինիմ «հասարակաց գաղափար» կոչուած բանին, ես կը թողնեմ այդ առանց շատ ներողութիւն խնդրելու, և մէկ անգամ էլ կը փորձեմ իմ բախտը այն տաղաշափութեան միջոցով, որով ես ցարգ ոչինչ չեմ հրատարակել եթէ ոչ այնպիսի կտորներ, որոնց նախկին շրջանառութիւնը մի մասն է իմ այժմեան և կը լինի իմ ապագայ ամսոսանքի:



Ինչ վերաբերում է իմ պատմութեան և պատմութիւններին առ հասարակ, ես ուրախ կը լինէի որ իմ տիպերը որքան կարելի է կատարեալ և սիրելի դուրս բերուած լինէին, մանաւանդ որ ինձ երբեմն քննադատել են և նկատել նոյնչափ պատասխանատու նրանց գործերի և յատկութիւնների համար, սրչափ պատասխանատու կը լինէի ես եթէ այդ գործերը և յատկութիւնները իմ սեփականը լինէին: Թո՛ղ այդպէս լինի: Եթէ ես շեղուել եմ գէպի այն մասը ու սին փաստսիրութիւնը, որ տեփական Եսից վերցնեմ իմ նիւթը, ուրեմն իմ պատկերները հաւանականաբար նման են քանի որ աննպաստ են: Եւ եթէ շեն — նրանք, որ ինձ ճանաչում են կը շտկեն իրենց սխալը, իսկ նրանց, որ շեն ճանաչում, ինձ համար հետաքրքրական չէ շտկել: Ես ոչ մի մասնաւոր փափագ չունիմ, որ իմ ծանօթնեց բացի մի ուրիշն էլ հեղինակին համարէ աւելի լաւ քան նքա երեակայութեան ստեղծած էակները: Բայց ես չեմ կարող մի քիչ չը դարձնալ մի բանի քննադատական բացառութիւնների վրայ — և գուցէ չը դուարձանալ էլ — երբ տեսնում եմ, շատ դուստաններ



( ընդունում եմ, առիթ արժանաւոր ) շատ  
պատուաւոր հռչակ վայելելիս, եւ բոլորովին  
ազատ համարուած ամեն մասնակցութիւնից  
թերութիւններէ մէջ այնպիսի հերոսներէ,  
որոնք այնուամենայնիւ քիչ առիթ ցարոյական  
են քան « Գեաւուրը » եւ դուրս . . . քայց ոչ,  
եւս ստիպուած եմ ընդունել որ « Զայլի հա-  
րուիք » շատ անդուրեկան անձնաւորութիւն  
է: Ինչ վերաբերում է այն հարցին թէ ո՞վ է  
նա, նրանք, որոնց համար հաճելի է այդ օր-  
պը կարող են առ նրան ինչ անուն որ կու-  
ղին:

Եթէ արժենաւ անհետացնել այդ ապա-  
ւորութիւնը, ինձ համար խիստ նպաստաւոր  
կը լինէր այն հանգամանքը որ մի մարդ — հը-  
ճուանքը իւր ընթերցողների եւ բարեկամների,  
բանաստեղծը ամեն շրջանների եւ կուսքը իւր  
արուեստակիցների, թող է տալիս ինձ այս-  
տեղ եւ այլ ուր ստորագրել ինձ, ամենատե-  
կեղծ եւ սիրայիւր կերպով նրա խոնարհ ծա-  
ռան:


Բաշիրն











## ՆՈՒԱԳ Ա.

« — nessun maggior dolore,  
Che ricordarsi del tempo felice  
Nella miseria — » Dante.

Չը կայ աւելի մեծ ցաւ քան այն,  
որ մարդ յիշէ իւր երջանիկ օրը  
դժբախտութեան ժամանակ:

### I

« Մթնակապոյտ ովկիանի\*»

Ջուրի վերայ ցնծագին,

« — Նոյնչափ անհուն մեր մտքեր,

Նոյնչափ ազատ մեր հոգին —

« Հեռն, որչափ մի դեփիւռ

Կարող լինի մեղ վարել,

---

\* Այս քերթումի ժամանակը, համեմատելով դէպքերի  
պահանջած ժամանակամիջոցին, կարող է շափաղանց  
կարճ թուալ, բայց եզէեան ամբողջ կողմների հեռա-  
ւորութիւնը ցամաքից աւելի չէ քան մի քանի ժամուայ  
առաւատաւորի ճանապարհ, և ընթերցողը թող ընդունէ  
որ քամին միշտ այնքան յաջող է եղել, որքան յաջող ե-  
ղել է ինձ համար յաճախ:



« Հեռսւ, որչափ փրփուրներ

Կարող լինին թափառել՝

« Դիտիր դու մեր պետութիւն,

Դիտիր, ահա և՛ մեր տուն:

« Ծառայն է մեր աշխարհի

Անծայրածիր, անպարփակ.

« Մեր դրօշն է մեր դայիսոն,

Մեզ հանգիստուն՝ հըպատակ:

« Մերն է կենցաղ վայրենի,

Թարմ յոյզերով լի մի կեանք.

« Մերն է, կռուից մինչ հանգիստ,

Ամեն մի քայլ՝ մի բերկրանք:

« Ո՛հ, սիլ կարող է պատմել:

— Ոչ դո՛ւ, ըսարսւ՛ւկ ճոխակեաց,

« Որից հոգին կը սոսկար

Ջուրի վերայ լեռնացած:

« Ոչ դո՛ւ, սիլ աէր ղեղխութեան՝

Ամեն տենչից աւելի,

« Որից չէ բունն ամօքիչ,

Հաճոյքը չէ հաճելի:



« Ո՛հ, ս՛վ կարող է սլատմել:  
— Նա՛ որի սիրտն առնական

« Ծովի վերայ լայնարձակ  
Պար է բռնել յաղթական —

« Այն թրթռանք հրճուալից,  
Այն դարկերակ կատաղի,

« Սարսուռ է զգում որոնցից  
ձամբորդն անհետք այդ շաւղի:

« Նա՛ որ կարող է կռուին  
Ի սէր կռուի ձեռնարկել,

« Եւ, ինչ վրտանդ է ոմանց,  
Զուարճութեան փոխարկել.

« Փնտուել՝ ինչ որ երկշոտին  
Եւանդ կըտար ՚ի վախուստ,

« Եւ, ուր կերթար թոյլն ուշքից,  
Կարող է զգալ նա ներքուստ —

« Ըզգալ մինչև վերջին ծալքն  
Ուռչող լանջի խորքերում,

« Յոյսի մի նոր արթնութիւն,  
Ոգու մի նոր սաւառնում:



« Ի՞նչ վախ մահից, թէ մեզ հետ  
Մեռնէ նաև թշնամին.

« Եւ ի՞նչ է նա, եթէ ոչ  
Մի քուն տաղաուկ ու խորին:

« Մահը գայ թո՛ղ երբ ուզէ,  
Կհանրի ծաղիկն ենք քաղում.

« Ի՞նչ հոգ — երբ որ խամրէ գա  
Հիւանդութեամբ, թէ կուուամ:

« Նա, որ գիտէ միշտ սողալ՝  
Փաածութեան անձնուէր,

« Մահճին դամուած՝ թո՛ղ քարչ տայ  
Ախտի, ցաւի տարիներ.

« Ցնցէ թո՛ղ գլուխն անկայուն,  
Եւ շունչ առնէ դժուարին —

« Մերն է մարդի թարմութիւն,  
Եւ ո՛չ ահնդի անկողին:

« Փսիում է մինչ կարկամած  
Նա իւր հոգին տանջալից,

« Մէկ ոստիւնով, մէկ ցաւով  
Թռչում է մերն իւր բանալից,



« Գուցէ նեխուած նորա զին

Պանծայ կարող կը լինի

« Քարանձաւով իւր անձուկ,

Իւր սափորով աճիւնի.

« Գուցէ նորա դամբանին

Զօնեն ոսկեայ դարգարանք,

« Նորա, որոնք գարշելով

Ատու՛մ էին նորա կեանք: —

« Մերն են անկեղծ արցունքներ,

— Թէև միայն մի բանի —

« Երբ պատանեն ու թաղեն

Մերոնց ալիքն ովկիանի:

« Մերն է թախիժ սիրալիր

Խնջոյքներում յաղթական,

« Երբոր լեցուին բաժակներ

Ի յիշատակ մեր անուան:

« Տապանազրի փոխարէն

Մերն է արխուր այն երկրառ —

« Երբ յաղթողներն ի վերջոյ


Բաժնում լինին ճոխ աւար

« Եւ հառաչում — արամու թեամբ

Պատած ամեն մի երես —

« « Ինչպէս պիտի հրճուէր արդ

Նա որ ընկաւ քաջի պէս: » »



II

Այսպէս էին այն նստեր,

Որոնք հէնի կողեակից

Վառ խարոյկի բոլորափք

Հնչում էին խրոխտայից:

Ժայռին, ձայներ այդպիսի,

Թնդացնելով արձագանք՝

Ականջների — նայնչափ բիրտ —

Թում էին տաղերգանք:

Խումբ — խումբ նորա նստած,

Ափի վերայ սակեզոյն,

Խաղում, խրմում, խօսակցում,

Թուր են սրբում, կամ դաշոյն:



Ընարում դէնքերն ու տալիս  
Ամեն մէկին մի սուսեր,  
Անհոգարար դիտելով  
Ջեղրին՝ արեան արաւներ:

Նաւն են սմանք նորոգում,  
Չիտկում նորա դեկն ու թին,  
Եյն ինչ սմանք մտադրադ  
Քայլ են առնում ծովափին:

Ոմանք վայրի թաշունի  
Վարմ են սարքում սրսական,  
Մինչդեռ ոմանք արեում  
Սփռում են թայց մի ուսկան:

Ճերմակ մի բիծ տեսնելիս՝  
Նայում իսկոյն դէպի ծով,  
Արկածատէր բընութեան  
Ամբողջ անյադ ծարաւով:

Պատմում անցեալ դէպքերից  
Հազար ու մէկ պատահար,  
Եւ հարց տալիս, թէ նորից  
Ո՛ր կը գանեն մի տար:



Հող չէ թէ ուր, այդ մասին  
Պետք գիտէ վճիռ տալ.  
Նորա պիտի ընդունեն  
Վրճիռն իբրև անսրխալ:

Ո՛վ է այդ պետ: Ամեն տեղ  
Այդ անուանին ծովահէն  
Ահ է սփռել ու հաշակ.  
Բայց ո՞վ է նա — չը գիտեն:

Չէ՛ մօտենում նա սորանց՝  
Թէ ոչ իւր կամքն յայտնելու,  
Նորա բառեր՝ միշտ սակաւ,  
Աչքն ու հարուած՝ միշտ հատու:

Նոցա ուրախ խնջուքին  
Նստում է նա պաղարիւն,  
Սակայն ի սէր յաղթ ու թեան  
Ներում են այդ լռութիւն:

Նորա համար չէ լեցում  
Կարմիր գինին բերկրալից,  
Չը ճաշակուած՝ այդ բաժակ  
Անցնում է միշտ նորանից:



Փնչ է նորա կերակուր.

— Յետին նորա նաւաստին

Պուզէր նոյնպէս, որ անցնէ

Յա շը դըպած իւր բերնին:

Ամենաբիրտ արմատներ,

Ամենակոշտ մի նըկան,

Առանց նոյն իսկ ամառուայ

Մըքեղէնի գեղխուծեան՝

Նորա ընթրիք կարճատև

Զունէ մի բան այնքան ճոխ,

Որ սեղանից արտաքսէ

Սակաւապէտ մի ճգնող:

Յայց մինչ կոպիտ հաճույքից

Զուրկ է նորա զգայարանք՝

Մտքին արնունդ է տալիս

Վայելչամերժ նորա կեանք:

« Վարէր այս կողմ. » — վարեցին:


« Այսպէս արէր. » — արուեցաւ:

« Հետեւեցէր ինձ պատրաստ. »

— Աւարն արդէն աւարուեցաւ:

Այոպէս կարուկ՝ խօսքի մէջ,  
Կարիճ է նա գործելու.  
Հնազանդ են ողջ, ու ոչ ոք  
Հարց չէ տալիս թէ ինչո՞ւ:

Իսկ հարցնողին, մէկ խօսքով  
Կամ նայուածքով սաստական՝  
Յայտնում է նա քամահրանք,  
Բայց չէ դիժում պատասխան:



### III

« Մի նաւ, մի նաւ երկաց. »  
— Յուսախոստում մըցանակ —  
« Ի՞նչ է նորա դրօշ և աղգ.  
Ի՞նչ է ասում մեր դիտակ:

« Արօ չէ, աւանդ, և սակայն  
Նորան բարի ժամանում,  
« Նշանն է մեր արնեբանդ  
Նորա կայմից փողփողում:



« Մերն է այդ նաւ, և ահա  
Գառնում է նա զէպի տուն: »  
« Փշիր քամի, որ խարխախ  
Չըգէ, շեղած իրիկուն: »

Անցաւ ծայրից ցամաքի,  
Խորշը մըտաւ ալեղարդ,  
Փըրփուրն ի բայ վանելով  
Նորա ցրուսին այն հըպարտ:

Ի՛նչ փառահեղ ու սահուն  
Անցնում է նա ջրուղուց,  
Ճերմակ թևով թռչելիս —  
Սակայն երբէք թշնամուց:

Սիգում է մինչ այս ձևով  
Լինի, կարծես, կենդանի,  
Բոլոր տարերքն ի կրօն  
Կարծես կոչած նա լինի:

Հուր ու ջրի սարսափին  
Ո՛վ չէր լինի յանձնառու,  
Նորա ծոցում մարդաշատ  
Իրրի իշխան ապրելու:





IV

Չառաշաձայն շղթայից  
Նաւը հնչեց կերկերուն,  
Թարխախ ձրգած, անկրտաւ,  
Չուրջ է դառնում երերուն:

Թմբուեց արդէն ծովափին,  
Դիակեց ամբոխը պարապ՝  
Ցած դրուելիս մի մակոյկ  
Նաւի յետքից ցանցակապ:

Իջան մարդիկ նորա մէջ.  
Թի են վարում ներդաշնակ,  
Մինչև օփին խշշալով  
Նստաւ մակոյկն ի ցամաք:

Բարի գալուստ բարձրաձայն,  
Խօսակցութիւն հրճուազին,  
Սեղմում է մինչ ու թօթւում  
Չեռքը ձեռքի՝ ծովեզրին:

Ուրախ ժրպիտ, ըշտապ հարց,  
Նոյնչափ արագ պատասխան.

Սրաի խոստում երկուստեք  
Խնջոյքների ցնծութեան:





V

Լուրը հասաւ ամեն տեղ.

Ամբոխն աճեց անյապաղ,

Եւ լսուեցան միախառն

Մրմունջ, ձայներ ու ծիծաղ:

Կանանց փափուկ հնչիւններ՝

Հարցեր տալով անձկայից,

Սիրողների, այրերի,

Ծանօթների վիճակից:

« Հոգ չէ թէ շին յաջողակ.

Ո՞ղջ են արդեօք, ասացէք.

« Պիտի լըսենք նոցա ձայն,

Տեսնենք նորանց մենք երբէք:

« Այնտեղ, ուր մարտը պայթեց,

Ուրտեղ թնդաց ծովն ամբողջ.

« Չէ որ նոքա քաջ էին:

Բայց նորանցից ո՞վ կայ ողջ:

« Իրանք թո՞ղ գան ու բաշխեն

Երջանկութիւն ու զարմանք,

« Վանեն ի բաց համբոյրով

Այս աչքերից կտակածանք: »





VI

« Ո՛րտեղ է մեր խմբապետ  
Նորա համար լրեր կան . . .  
« Կարծեմ, երկար չը տեէ  
Հրճուանքը մեր տեսութեան՝

« Անկեղծ ութեամբ խրատուսիչ  
Թէև այսքան համառօտ . . .

« Բայց դ՛ու, Զուան, մեզ խկոյն  
Առաջնորդիր պետի մօտ:

« Ողջունուեցանք դեռ հիմա,  
Գարձին կընթրենք միասին,

« Եւ ամենով կը լսէք  
Ինչ ով ուղէ տաանձին » :

Նեղիկ անցքով ժայռափոր  
Անցնում են վեր յամբընթաց  
Գէպի նորա դիտարան՝  
Խորշի դիտին բեռուած,

Թուփի միջով ու ծաղկաւնց  
Գեռափրթիթ ու վայրի,  
Արծաթափայլ եզերքով  
Զովարտաշունչ ահերի,



Որոնց ցըրիւ վըտակներ  
Թողած զբանիտ բարանձաւ՝  
Յատկում են դուրս կենսաշող  
Ու հրաւիրում քո ծարաւ:

Ժայռից ի ժայռ բարձրացան . . .  
Ո՞վ է այն մարդ միայնակ  
Վանդնած, նայում այրի մօտ  
Գէպի ջրերն ընդարձակ:

Վեցած խոհուն ու շինած  
Սուրն իւր թեին յենարան,  
Որ չէ, կարմիր այդ ձեռքին,  
Յաճախ անմեղ դաւադան:

« Հէնց ինքն է դա, Վանրադն է,  
Սյտեղ, և միշտ միայնակ.  
« Յառանջ, Ջուան, և յայանիր  
Մեր գալըտեան նըպատակ:

« Նայում է նա մեր նաւին . . .  
Ասն, լրեր կան գազանի,  
« Որ պէտք է շուտ իմանայ . . .  
Թո՛ղ մեզ խեղոյն ընդունի:



« Մենք շենք իշխում մօտենալ. . .  
Գիտես նորա բարկութիւն,  
« Երբ մէկն անկոչ խանդարէ  
Նորա դաժան մենութիւն: »

VII

Ջուան գընաց հաղորդեց  
Լուրը նոցա գալտեան.  
Նա չը խօսեց, այլ առաւ  
Հաւանածն մի նըշան:

Ջուան կոչեց — գընացին.  
Տուին նորա երբ բարե՝  
Կոնրադ շրթունք չը բացաւ,  
Այլ թերուեցաւ մի թեթեւ:

« Այս նամակներ, աէր Կոնրադ,  
Յոյնն է առեւ — մեր լրտես.  
« Մօտ է աւար, կամ կորուստ,  
Եթէ խորհենք նորա պէս: »



« Ինչ էլ լինին այդ լրեր —  
 Մենք զեկուցում պիտի տանք,  
 « Որ . . . » « լռութիւն, լռութիւն. »  
 Կտրեց նորանց աղճատանք:

Իսկոյն և եթ լռեցին  
 Ամօթահար և ապշած,  
 Մըմնջալով մէկ մէկու՝  
 Իւրաքանչիւրն իւր վարկած:

Գաղտագողի նայուածքով  
 Աչքն են դիտում Գոնրադի,  
 Որ նըկատեն թէ լրից  
 Ինչպէս ազդուէ նա պիտի:

Բայց նա կարծես գուշակեց —  
 Գէմքը մի կսղմ շուռ տուած՝  
 — Գուցէ ծածկել ուզելով  
 Յոյդ, հըպարտանք, կամ կասկած —

Թուղթը կարգալ ըսկըսեց.  
 « Իմ յուշատետրս իսկոյն բեր.  
 Ո՛ւր է, Զուան, Գոնսալփօն: »  
 « Նորեկ նաւումն է նա, տէր: »

Հ.Տ.Օ.Ե.Բ.Ը



« Ըստ լաւ, այնտեղ թո՛ղ կենայ.

Յանձնիր նորան այս պատգամ:

« Այժմ ամեն ոք իւր գործին,

Պատրաստուեցէք, մինչև զամ:

« Անձամբ պիտի վարեմ ես

Այս արշաւանքն այս գիշեր:»

« Հէնց այս գիշեր, տէր Կոնրադ»,

« Այդ է, այո՛, իմ պատուէր:

« Քամին թափով կը փռչէ,

Երբոր եղաւ իրիկուն:

« Լանջապանակս նա քո հետ.

Վեր նա կ' իմ վերարկուն:

« Մէկ ժամ անցած՝ առաջաստ

Պիտի բանանք մենք արդէն.

« Չը մոռանաս քո շեփոր,

Քարրինս էլ լաւ թո՛ղ մաքրեն:

« Իսկոյն և եթ սրբեն թո՛ղ

Սայրն յարձակման իմ սրբի,


« Պաշտպանը թո՛ղ լայնացնեն,

Որ բռունցքիս յարմարի:



« Թնդ զինագործն անյապաղ  
Տայ պատուէրիս կատարում.  
« Անցեալ անգամ թշնամուց  
Չեռքս էր յաւէտ\* դա տանջում»

« Նըշանարան թնդանօթ  
Թնդ ճիշտ ժամին արձակեն,  
« Իմաց տալու բոլորին  
Հեռանալու մեր բոպէն» »



VIII

Գըլուխ տուին յարգանքով  
Եւ ըշտապով քաշուեցան՝  
Նորից շուտով դիմելու  
Գէպ ամային ծփական:

Քայց շեն դժգոհ, քանի որ  
Գետն է նորանց ուղեկցում,  
Եւ ո՞վ կ'իշխէր առարկել,  
Երբոր նա՛ տար որոշում:

---

\* Այս բառը կս գործ կմ ամել՝ « աւելի » է  
իմաստով: Ծ. Թ.

Այդ մարդը՝ լուռ ու մենիկ,  
Այդ մարդը՝ փակ առեղծուած,  
Որի հառաչ լսած չեն,  
Որի ժպիտ չեն տեսած:

Որի վախից խուճրի մէջ  
Սոսկում է իսկ կատաղին,  
Պատում ամեն թուխ դէմքի  
Աւելի բաց մի դեղին:

Տիրում է որն իւր մարդկանց  
Այն արուեստովն իշխողի,  
Որից քշում, և սակայն  
Սառչում է սիրտն ամբոխի:

Ո՞րն է արդեօք այն հըմայք,  
Որին այդ խուճրն յանցարար  
Տենչում է միշտ, վկայում,  
Բայց դիմադրում վայրապար:

Ի՞նչն է այդպէս ամբացնում  
Կապը նոցա հաւատքի:  
— Դիւթանքն է սոսկ դա հողու,  
Եւ ոյժն է լոկ դա մտքի



Յաջողութեան յարակից,  
Որ հմտութեամբ իւրացուած՝  
Գիտէ ձուլել միշտ այլոց  
Տկարութիւնն իւր կամաց,

Գործել նոցա բազուկով՝  
Առանց նոցա գիտութեան,  
Եւ մեծագոյն նոցա գործ  
Տոյց առ իրրե սեփական:

Այսպէս եղել, և այսպէս  
Պիտի լինի յետայսու,  
Քաղուձք պիտի աշխատեն  
Ի վայելում մէկ հոգու:

Ջրճիւռն է սա բընութեան . . .  
Բայց թո՛ղ թշուառն աղքատիկ  
Չ'ատէ նորան, չը բասրէ,  
Որն իւրացնէ արդասիք.

Ո՛հ, թէ ոսկեայ շղթայի  
Նա « քաշն » երբէք իմանար,  
Որքան « թեթե » կը գանէր  
Տառապանքներն իւր խոնարհ:





IX

Իւրաքանչիւր հին աղղի  
հերոսներից նա տարբեր՝  
—Որոնք գործով դև էին  
Յայց գէթ դէմքով սասուածներ—

Դըրսից Կոնրապ շունի բան  
Ըսքանչացում պատճառող,  
Թէև տակից մուտ յօնքի  
Սչք է ցոյում բոցաշող:

Առոյգ, բայց ոչ հերկուլեան  
նորա հասակը միջին  
Սչքիդ հանդէս շէ բերում  
Հսկայական մի մարմին:

Բայց սով դիտէր ուշադիր,  
Ամբողջի մէջ կը տեսնէր՝  
Ինչ ունենալ կարող շեն  
Ամբոխային անհատներ:

Պիտի տեսնէր, դարմանար,  
Խոստովանէր անպայման,  
Թէ ճիշդ էր այդ, բայց ինչո՞ւ —  
Յայտնի դա շէր և՛ իրան:



Այրուած էր գէմքն արևից,  
Մազերը մութ և առատ  
Ծածկում են խիտ գանգուրով  
Բարձր ու տեղոյն մի ճակատս:

Յայտնում է վեր գալարուող  
Ըստէպ շրթունքն այդ յամառ  
Գոռող մի միտք, որ սանձում,  
Բայց չէ ծածկում նա իսպառս:

Չներն՝ հանգիստ թէպէտե,  
Եւ ձայնը՝ հարթ ու սահուն,  
Բայց կար մի բան, որ կարծես  
Պահում լինէր նա թարուն:

Նորա դոյներն այլայլուող,  
Գէմքի գծեր նորա խոր  
Գրաւում են աչքդ և ազդում  
Քեզ շրջիթանք անսովոր:

Կարծես, նորա հոգու մէջ,  
Ազատութեան խորքերում  
Ահեղ՝ սակայն անորոշ,  
Գործում լինէր ըզզացում:



Գուցէ լինէր այդ այդպէս —  
Ըստոյգ ոչ սք շք գիտէր,  
Զսպում էր խիստ հայեացքով  
Նա դննութիւն տու ընթեր:

Սակաւ կային այնպիսիք,  
Որոնք կարող լինէին  
Քաց հակատով դիմանալ  
Ազդու նորա նայուածքին:

Վարպետ էր նա, — երբոր մերթ  
Ուղէր մի ոք խորամանկ  
Նորա մտքերն հասկանալ,  
Նորա դիտել այլայլանք—

Դիմացինի նըպատակն  
Իսկոյն և եթ կարգալու,  
Նւ յառեյու նոյնպիսի  
Առ նա հայեացք խուզարկու,

Որ նայողն այն միզուցէ  
Մասնէր գաղտնիքն իւր նորան  
Աւելի շուտ, քան հանէր  
Նորա խորհուրդն երևան:



Նորա հեզնող քրքիջում  
Դե կար, կարծես, ծիծաղի,  
Որ վախ գիտէր ներշնչել  
Եւ ըղգացում կատաղի:

Եւ ուր մթին խոժոռանքն  
Ընկաւ նորա բինալից,  
Գուժը հրաժեշտ հառաչեց,  
Յոյսը փախաւ այնտեղից:



X

Քոյլ է յոռի մաքերի  
Ամեն նշանն արտաքին,  
Ներսից, ներսից է, որ լոկ  
Գործել գիտէ շար հոգին:

Յայտնում է սէրն արտաքուստ  
Սրտի ամեն այլայլում.  
Ոչինչ, դառն ժպտից գատ,  
Ոխն ու կեղծիք շեն մատնում:

Պառաւարտաժ ապառիկերի  
Գունատութիւնն աննըչան,  
Զրթանց թեթև մի ոլորտ  
Պատմում են սոսկ բեղ մի քան

Աւելի խոր կըքերից,  
Որոնց տեսնել թէ ուզես  
—Ըստ արժանւոյն դատելու—  
Պէտք է լինիս դու անտես:

Յետոյ՝ կարող թէ լինիս  
Եւ չը սոսկաս, ո՞վ նայող,  
Գիտիր նորա դու հանգիստ,  
Նորա հոգին տես անքող.

Աչքերը՝ լեր սկեռուած,  
Քայլուածքն՝ անհարթ և ըշտապ,  
Մատերը՝ սեղմ, դալարուն.  
Եւ մերթ յամուրդ ու տազնապ,

Երբոր ցնցուի և նայէ  
Մօտիկ ձայնից մի քայլի,  
Զիցէ թէ գան ու տեսնեն  
Նորա դրութիւն սոսկայի:




Գէմբը, դիտիր, ծամուռն,  
Սրտի նըկարն իսկական.  
Մաքերն՝ արձակ, որ յուղուին,  
— 2 է թ է ի բայ հեռանան —

Որ գայրանան, մարտուն,  
Ցնցուին, սառչին կամ վառուին.  
Այտի վերայ որպէս բոց,  
Կամ պաղ քրտինք՝ ճակատին:

Գիտիր ինչպէս խորովում,  
Մըկում է կուրծքն այդ մենակ:  
Նախկին դաղիր օրերի  
Խորշակաշունչ յիշատակ:

Գիտիր . . . բայց ո՞վ է տեսել,  
Կամ երբ տեսնել կը լինի  
Մարդուն՝ այնպէս ինչպէս է,  
Գաղտնի հոգին՝ հոլանի:



XI

Պակայն Կոնրադ ի բընէ  
Չէր ըսանդժուած, որ դառնար  
Առաջնորդող շարերին,  
— Չարի գործիրն այդ վատթար: —

Փոխուած էր սիրտն, երբ նորան  
Գործերն իսպառ քշեցին  
Մաքառելու մարդու դէմ,  
Եւ տուժելու իւր հոգին:

Ջհատութեան դպրոցում  
Ծռեց նորան աչս աշխարհ,  
Խօսքով՝ խելօք, իսկ գործով՝  
Այդտեղ էր նա մի յիմար:

Գարի անխախտ՝ որ զիջէ,  
Գարի հըպարտ՝ թերուելու,  
Աղնութեամբն իւր անդամ  
Դատապարտուած խարուելու—

Ազնութիւնն անիծեց,  
Իբր արմատին շարութեան,  
Այլ ոչ նորանց, որ այժմ էլ  
Խարում էին դեռ նորան:



Եւ պարզեաժ լինելով  
Բարի մարդկանց առատ դոյք՝  
Չունէր նորից բաշխելու,  
Ո՛չ միջոցներ, ո՛չ հաճոյք:

Գաւաճանուած, խուսափուած,  
Ահագղեցիկ, դիրախար,  
Նախքան նոյն իսկ մեղմանար,  
Պատանութեան նորա թափ,

Ատեց ամբողջ մարդկութիւնն  
Ատելութեամբ շափազանց,  
Որպէս զի զգար խղճի խայթ  
Եւ կամ զղջար նա սրտանց:

Եւ ձայնը խրոխտ իւր ցասման  
Սեպեց նա սուրբ մի հրաւէր,  
Վրճարելու բոլորին  
Ոմանց արած շարիքներ:

Թէ շար էր ինք, գիտէր այդ,  
Բայց չէր սեպում կարելի,  
Թէ այն բանից, որ ինքն է,  
Այր լաւ լինին աւելի:



Անուամ էր նա աղնիւիւն,  
Որպէս կեղծի, նըշաւակ,  
Որը գաղտնի կանէր այն՝  
Ինչ քաջն անէր համարձակ:

Գիտէր թէ ինք սիրուած չէ—  
Սակայն թէ նոյն առողնիւր  
Քծնուամ էին ու սոսկուամ —  
Նոյնչափ վատահ նա գիտէր:

Մենակ, օտար ու վայրի  
Ապրում էր նա առանձին.  
Քամահրանքից՝ անաղարտ  
Համակրանքից՝ անբաժին:

Վիշտ էր սփռում իւր անուամբ,  
Իւր գործերով՝ զարմացում,  
Իսկ ով տաում էր նորան,  
Արհամարել չէր իշխում:

Քայլում է մարդ որդի վրայ  
Սակայն խորհում անձկալից,  
Նախ քան իժին թունաւոր  
Արթնացընէ իւր քընից:



Գուցէ դառնայ դէպի վեր —  
Բայց որդը վրէժ չի առնի,  
Սա, մեռնելով՝ չի թողնում  
Իւր թշնամուն կենդանի:

Փակած գոհին յանցաւոր  
Քարրն իւր ոյժով ամենայն  
—Փշրի էլ մարդն յաղթում չէ. —  
Խայթում է օձն և սակայն:



## XII

Չար չէ ոչ ոք բովանդակ.  
Նորա սրախց մի զգացում  
—Յարակենդան ու փափուկ—  
Գեռ ևս մեկնել չէր ուզում:

Յաճախ գիտէր նա ծաղրել  
Այլոց որպէս զոհերի  
Կրքին՝ վայել մի մանկան,  
Եւ կամ միայն յիմարի:

Բայց ինքն այդ նոյն կրքի դէմ  
Գործ էր գնում զուր ջանքեր.  
Եւ մինչև իսկ նորա մէջ  
Պէտք է կոչել գորան „ Սէր “:

Սէր էր, այն, անփոփոխ,  
Անքակտելի, անպատում,  
Մէկի միայն նուիրուած՝  
Որից բընաւ շէր գատուում:

Տեսնում է նա շատ անգամ  
Գեղեցկուհի գերիներ —  
Բայց չէ փնտռում, չէ խորչում,  
Անց է կենում անտարբեր:

Նորա բերդում շատ կային  
Չքնաղ կանայք բազմազան,  
Բայց չէր ձանձրոյթն ամոքում,  
Մէկն իսկ, նորա մենութեան:

Սէր էր, այն, նորա մէջ —  
Եթէ փափուկ մի գորով  
Անցած բովից փորձերի  
Եւ ամբացած ցաւերով,



Որ չէ փոխուում, երբ հեռու,  
Նայեն է ամեն կլիմայում,  
Եւ — ո՛հ, ողջից առաւել —  
Ժամանակով չէ սառչում,

Որին ո՛չ յոյս խորտակուած,  
Ո՛չ խանգարուած ծըրազիր  
Կարող էին աղօտել,  
Թէ Ըա ժպտար սիրալիր —


Որին ո՛չ մի բարկութիւն  
Եւ ո՛չ մի ցաւ անհամբեր  
Կարող էին ուղղել առ  
Առ սիրելին տրտունջներ.

Տեսնուելիս՝ միշտ ուրախ,  
Բաժանուելիս՝ անվրդով,  
Որ միզուցէ ցաւ աղղէ  
Սիրեցեալին իւր վշտով.

Որին ոչինչ չէր խախտում  
Եւ խախտելու սպառնում չէր.  
Եթէ երբէք մարդու մէջ  
Սէր է եղել — այս էր սէր:

Սրիկայ էր նա — եպիսկոպոս  
Նորա գլխին թող տեղան —  
Բայց ոչ այս մէկ կրքի մէջ,  
Եւ ոչ նորա մարբուծեան:

Փաստ՝ որ շունէր նա բարի  
Այլ յատկութիւն բընաւին:  
Մեղքն իսկ խեղդել չը գօրեց  
Այս ամենից չքնադին:



### XIII

Նա կանգ առաւ, մինչև որ  
Նորա մարդիկն ըշտապած  
Լեռնանկիւնից առաջին  
Չորակն իջան դէպի ցած:

« Տարօրինակ լուր է սա:  
Զատ եմ տեսել վրտանգներ,  
« Բայց սա վերջինս է թլոււմ,  
Եւ չը գիտեմ թէ ընդէր:



« Միրտս է այդպէս գուշակում . . .

Բայց վախենալ — այդ երբէք:

« Ոչ էլ այստեղ, իմ քաջեր,

Ինձ վարանոտ կը գանէք:

« Խոհեմ չէ մեր յարձակում.

Մահ է, սակայն, անկասկած

« Կենալ՝ մինչև նորա մեզ

Այստեղ գանեն թակարդուած:

« Բախտը մի քիչ թէ ժպտար . . .

Եւ ծըրագիրս յաջողէր . . .

« Սուգի համար մեր մահուան

Կըստեղծ էինք լացողներ:

« Այն, քնեն թո՛ղ հանգիստ,

Թո՛ղ երազեն անվրդով,

« Արշալոյսին չեն արթնել

Այնքան փայլուն շողերով,

« Որ այս դիշեր կը վառուին,

— Սակայն, քանի, դու փշիւր —


« Մի դաս տալու ծովերի

Այս ծովերին վրէժնադիր:

- « Եւ այժմ դէպի Մադորան . . .  
Սիրտ իմ, ինչո՞ւ սուղուեցար .
- « Նորանը, ս՛հ, քեզանից  
Թեթե լինի թո՞ղ երկար :
- « Բայց քաջ էի . . . սի՛ն պարծանք ,  
Ուր ողջն են քաջ իւրնէ .
- « Խայթել գիտէ ճըճին իսկ,  
Երբոր մի բան պաշտպանէ :
- « Այս քաջութիւն, որ ունին  
Մարդ ու միջատ միասին,  
« Պարտ՝ գերագոյն իւր սխրանք  
Վհատութեան մղումին ,
- « Մեծ բան չարժէ . սակայն ցարդ  
Եղած է յոյսն իմ ազնիւ՝
- « Մեծ ոյժի դէմ կռուելու  
Խուճրբս կրթել փոքրաթիւ :
- « Երկար վարել եմ նորանց  
Ո՛չ զոհուելու ապարդիւն .
- « Միջակ և այժմ չէ մեր գործ —  
Զնչում, և կամ յաղթութիւն :



- « Այդպէս լինի . . . փոյթըս չէ  
Թէ մահն է ինձ ըսպատում,  
« Այլ ոք մղեմ իմ մարդկանց՝  
Ուրկից շունին ազատում:
- « Չնչին մի մաս իմ հոգսից  
Գրաւել է ցարդ իմ վիճակ,  
« Սակայն պատուիս չէ դայիս  
Այսպէս ընկնել մի ծուղակ:
- « Ա՛յս է բոլոր իմ արուեստ,  
Իմ խելք և իմ հմտո՛ւթիւն,  
« Մէկ նետուածքով վրտանգել  
Թէ ոյժ, թէ յոյս, թէ արիւն:
- « Ո՛վ բախտ . . . բախտի մեղքը չէ,  
Այլ գործերի քո ապուշ.  
« Բախտը գուցէ փրկէ քեզ,  
Եւ շտփազանց չէ դեռ ուշ:»



XIV

Այսպէս խորհեց նա մենակ  
Եւ խօսակցեց ինքն իրան,  
Մինչև հասաւ դագաթին  
Բերդապըսակ իւր լերան:

Այնտեղ կանգնեց՝ լսելու  
Անուշուխեամբ զերազանց  
Մի ձայն, որ շէր ականջին  
Երբէք թուամ չափազանց:

Երզը վերի լուսանցքից  
Լսուամ էր քաղցր ու հնչուն.  
Այս էր, ահա, դայլայլում  
Գեղեցկութեան իւր թռչուն:

« Հոգոյս խորքում բընակած  
Պայ փափկանոյշ այդ դադանիք.  
« Մենակ է նա և անյայտ  
Առ լոյս աշխարհ ու մարդիկ:  
« Խնդում է նա, երբ զարկում  
Սիրալըս սրտիդ զուգարար,  
« Ապա, ինչպէս կար առաջ,  
Լռում է նա դողահար:



« Այնտեղ, նորա կեդրոնում,  
Գամբանական մի ճըրագ

« Վառւում է թոյլ շառայլով  
Անտես, սակայն շարունակ:

« Չէ հանդցըրել այդ շողիկ  
Լքումն անգամ մթամած,

« Թէև իզուր նորա լոյս՝  
Կարծես երբէք չէ եղած:

« Ո՛հ, յիշիր ինձ. իմ շիրմից  
Ենց մի կենար, ո՛վ հողեակ,

« Առանց մի վայր խորհելու՝  
Ո՛վ կայ պառկած նորա տակ:

« Միակ ցաւին, որ իմ կուրծք  
Գիմազրաւել չէ իշխում,

« Այն է դանել քոնի մէջ  
Երբ և իցէ մտապում:

« Լսիր վերջին իմ տղերս  
Ամենաթոյլ, կաթոգին . . .

« — Աղնութիւնն արգելք չէ,  
Որ դու ողբաս մեռեալին —

« Ապա տնւր ինձ, ինչ երբէք  
Խնդրել եմ ես, բայց անյոյս—  
« Մէկ շիթ՝ վերջին, առաջին,  
Սոսկ վարձն այսքան իմ սիրոյս : »

Գրբան շէմբից մատւ ներս,  
Անցաւ նաև նրբանցբից,  
Եւ երբ սենեակն հասաւ նա,  
Երգը լռեց դիւթալից :

« Երգըդ տխուր է սաստիկ,  
Իմ Մագորն գեղանի : »

« —Երբոր ներկայ չէ Կոնրադ,  
Ի՞նչ ես ուզում որ լինի :

« Երբ գու չը կաս, որ սիրով  
Ականջ գնես իմ երգին,

« Տաղըս պիտի մասնէ միշտ  
Իմ սև մտքերն ու հոգին :

« Իւրաքանչիւր իմ հնչիւն  
Պէտք է կուրծքիս յարմարի .

« Լուռ չէ սիրան իմ, թէպէտև  
Չրթ ունքս իբրև մի համրի :



- « Հատ գիշերներ այս մահճում  
Թեք եմ ընկել ես մենիկ,  
« Եւ, երազուն երկխաղով,  
Հովը կարծել փոթորիկ.
- « Եւ կամ քամին, որ նաւիդ  
Հաղիւ շարժէր առագաստ,  
« Սեպել անդուսպ հողմերի  
Մի նախարան շարարաստ:
- « Թուում էր նա—[ժէկ մեղմ—  
Դամբանական մի մըրիկ,  
« Եւ ողբալիս քո գիակ'  
Ալեաց արդէն խաղալիք:
- « Արթնում էի, արծարծում  
Բոցը՝ լուսոյ քեզ նըշան,  
« Որ միզուցէ հանգչելու  
Դէտը թոյլ տար դաւաճան:
- « Հսկում էի անհանգիստ  
Ժամը ժամի յետեից,  
« Մինչև յոգնում ամեն աստղ,  
Խոյս էր տալիս վերեից:

« Բացում էր այդն ու համում  
Բոպէն արե ծագելու,

« Բայց դու չէիր դեռ գալիս,  
Հեռով էիր դու, հեռով:

« Փշում էր, ս՛հ, ի՛նչ սարսուռ  
Կուրծքիս վերայ պաղ բամին,

« Լոյսն ի՛նչ տխուր երևում  
Այնքան պզտոր իմ աչքին:

« Նայում էի, մի՛շտ նայում . . .  
Բայց ոչ մի նաւ չէր գալիս

« Ի պատասխան իմ այնչափ  
Արտասուալից ուխտերիս:

« Կէսօր եղաւ վերջապէս . . .  
Նըշմարեցի մի կըտաւ . . .

« Ողջունեցի, օրհնեցի . . .  
Մօտ է գալիս . . . վա՛յ, անցաւօ

« Ուրիշն եկաւ, Աստուած իմ,  
Վերջ իվերջոյ դա քոնն էր . . .

« Երանի՛ թէ յաւիտեան  
Յետ չը գային այդ օրեր:



« Մի՞թէ երբէք քեզ համար,  
Ո՛վ իմ Կոնրադ սիրելի,  
« Խաղաղութեան հրապոյրներ  
Ձեռն լինելու հաճելի:

« Հարստութիւնդ անկասկած  
Ո՛չ շափ ունի, ո՛չ հաշիւ.  
« Ունիս նաև սորա պէս  
Ապարանքներ բազմաթիւ,

« Որոնք այնքան դրաւշութիւն  
Ունին շքեղ և ուրախ,  
« Որ համողեն քեզ՝ ձրգել  
Թափառասէր քո կենցաղ:

« Գիտես դու որ վրտանդից  
Ոչ մի երկիւղ չունիմ ես,  
« Բայց չեմ կարող չը դողալ  
Երբոր, հողի՛ս, ներկայ չես,

« Ոչ ինձ համար — այլ նորա՝  
Թանկ ինձ, կեանքից առաւել,  
« Որ միշտ կուռում սիրոյ դէմ  
Եւ միշտ սիրում է կուռել:

- « Ի՛նչ խորթ մի բան, որ այդ սիրտն՝  
— Առ ինձ սիրով միշտ լեցուն, —
- « Կուէ բնութեան հակառակ  
Եւ իւր կամքի լաւազոյն:»
- « — Զատանց ի վեր փոխարկուած  
Խորթ է այս սիրտ, որ իրաւ  
« Որդի նրման ոանակոխ՝  
Քարբի նրման վրէժ առաւ:»
- « Կորցրած երկնից դըթ ութեան  
Նըշոյլն անգամ նա վաղուց՝  
« Զունի երկրում ուրիշ յոյս  
Քացի միայն քո սիրուց:»
- « Քայց և՛ իմ այն ըզգացում,  
Որ դատեցիր դու այդպէս,  
« Ատելութիւնս առ այլոց՝  
Դա սէրն է իմ դէպի բեղ —
- « Այնպէս իրար կաշկանդուած,  
Որ թէ դատես դու նորանց,  
« Քեզ սիրելուց կը կասեմ,  
Եթէ սիրեմ ես մտրդկանց:»



- « Բայց շնրկնչես այս խօսքից.  
Անցեալն իմ ինչ գրաւական,  
« Որ սէրդ իմ մէջ անփոփոխ  
Պիտի գտնէ ապագան:
- « Սակայն, խնդրեմ, Մագորան,  
Ջիդ տնւր սրտիդ փափկալից.  
« Այժըմ կրկին . . . ո՛չ երկար . . .  
Պիտի գատուինք իրարից: »
- « — Այժըմ պիտի բաժանուինք . . .  
Գարծես թէ սիրաս այդ գիտէր.  
« Այսպէս են միշտ շրքանում  
Երջանկութեանս անուրջներ:
- « Այժմ ես գընում . . . հէնց հիմա . . .  
Գործադրելի չէ այդ բան.  
« Նաւրդ հազիւ թէ հասաւ,  
Հազիւ թողեց իւր շղթան:
- « Դեռ ես ընկերն եկած չէ.  
Նորա մարդիկն էլ ամեն  
« Հանգստանան դեռ պիտի  
Նախ քան գործել ըսկըտեն:

« Ծաղրում ես ինձ տրկարիս,  
Կամ գրան գուցէ պատրաստում

« Կուրծքիս համար, առաջ քան  
Խայթէ նորան ըզգացում:

« Յայց ձեռք, խնդրեմ, շառնես դու  
Իմ կանաչի տրամուխիւն.

« Պակաս ունի քո կատակ  
Հաճոյք, քան թէ դառնութիւն:

« Կոնրանդ, լռիր, սիրելիս,  
Ե՛կ ե ինձ հետ վայելիր

« Ճաշըդ, որ ինքս եմ սարքել  
Իմ ձեռքերով սիրալիր:

« Եւ ի՛նչ զիւրին՝ պատրաստել  
Սակաւապէտ քո սեղան.

« Քաղել եմ ես պտուղներ,  
Տես, ամենից դուրեկան:

« Եւ երբ շէի ես վստահ  
Ո՛րն է սիրածդ աւելի,

« Գուշակեցի քեզ համար  
Մի խընամքով հաճելի:



- « Երեք անգամ բրլուրից  
Ցած եմ իջել, բարձրացել,  
« Ակերն ամեն փորձելու,  
Թէ սրն է գով առաւել:
- « Քո օշարակն այս գիշեր  
Քաղցր եմ շինել, սիրելիս,  
« Սառոյց դըրած ամանում  
Մի տես նորան շողալիս:
- « Քեզ չէ բաշխել ցնձ ութիւն  
Որթի հեղուկն անարտում,  
« Գու, աւելի քան մասկւմ,  
Բաժակն է երբ երկում:
- « Քեզ չեմ ուզում նախատել . . .  
Գոհ եմ, որ ինչ ուրիշին  
« Ապաշխարանք կը թուար,  
Ընտրել ես դու կամովին:
- « Բայց եկ, պատրաստ է սեղան  
Լուսովն արծաթ ճըրագի,  
« Որին կարծես ազդում չէ  
Քամին խոնաւ Սիրոքի:

« Իմ նաժիշտներ ժամանակդ  
Անց կը կացնեն ցնծագին.

« Մենք կը պարենք միատեղ  
Եւ կամ կերդենք միասին:

« Կամ իմ քրնար, որ հաճոյ  
Թւում է քեզ դեռ այնպէս,

« Կը դուրդուրէ, կը մեղմէ . . .  
Իսկ թէ հիմա չը սիրես,

« Մենք կը պատմենք քեզ համար  
Արիտատի վէպը\* հին՝

« Ինչպէս սիրուեց Ուիմպիան  
Եւ լքանուեց լալագին:

« Վատթար ես դու նորանից,  
— Որ այդ կոյսին մոլորեալ

« Տուեց իւր խօսքն ու կոտորեց,—  
Թէ այժմ ուզես հեռանալ:

« Կամ այն պետից դաւաճան . . .  
Տեսայ ժպտուն քեզ, երբոր

« Ժայռից կղզին Արիազնէ  
Քեզ ցոյց տուի մի պարզ օր,

---

\* Orlando Furioso, նուազ ժ.



« Եւ կէս կատակ ասացի,  
( Մի կէս, սակայն, վախեցած,  
« Չիցէ վատթար քան սոսկանք  
Յետոյ դառնաք իմ կասկած, )

« « Մի օր կօնրադն էլ այսպէս  
Ինձ կը ձրդէ, կերթայ ծով. »  
« Բայց նա խարեց ինձ — քանզի  
Կրկին դարձաւ նա շուտով: »

« — Կրկին, կրկին, սիրուհիս,  
Այն, շուտով և կրկին,  
« Լինի թէ կեանք աշխարհում,  
Թէ յոյս լինի երկնային,

« Նա կը դառնայ: Սակայն այժմ  
Փամը բերեց մեզ արդէն  
« Կրկնապատիկ ըշտապով  
Բաժանուելու մեր բոպէն:

« Ինչո՞ւ, կամ ո՞ւր, մեզ ի՞նչ հոգ,  
Քանի որ վերջն ամենի

« Այդ խօսքն անգուժ ու արխուր  
— Մրնաս բարեաւ — կը լինի:



« Բայց թէ միջոցն արդ ներէր  
Կասէի քեզ այն բոլոր . . .

« Չը վախենաս, շէն սորա  
Թշնամիներ ահաւոր:

« Այստեղ մարդիկ կը հսկեն  
Մշտականից առաւել,

« Թէ հարկ լինի պաշտպանութիւ  
Կամ պաշարման դիմադրել:

« Դու էլ մենակ շէն մընայ,  
— ներկայ թէն շէ քո տէր —

« Նաժիշտներիդ կունենաս,  
Եւ մեր կանանց քեզ ընկեր:

« Եւ երբ նորից տեսնուինք  
— Մխիթարութիւր այս մարտի —

« Մեզ քաղցրագոյն կը թուայ  
Հանդիսար մեր ապահով: »

Ջուան փշեց իւր շեփոր:

« — Լսի՛ր, փողի ձայն եկաւ . . .

Դէհ, մէկ համբոյր — մէկ հատ էլ —

Մէկ էլ — մընաս դու բարեաւ: »



Ելաւ, ցատկեց ու կալաւ  
Նորա կուրծքին լայնարձակ,  
Մինչև ուռեց Կոնրազի  
Սիրան այդ թաղուած դէմքի տակ:

Չ'իշխեց առ իրն ուղղել տալ  
Նա կապտամուժ այդ աշունք,  
Որ կոր էին ու թօշնած  
Տառապանքով անարցունք:

Ծփում էին թևի վրայ  
Մաղերն երկար ու սակի,  
Ամբողջ վայրի հրապոյրով  
Արձակահիւս գիսակի:


Այդ կուրծքն, ասես, դարկում շէր  
Դէմքն էր իշխում ուր նորա.  
Այդ ըզգացումն — այնքան լի —  
Չէր ըզգացում համարեա:

Հսիր, նաւի թնդանօթն  
Ահա գոռաց դէպ վերե,  
Նըշանն արե մտնելու...  
Նա նըզովեց այդ արե:

Նորից, նորից խենթի պէս  
Սեղմեց նորան իւր կուրծքին...  
Զոյում էր կինն ու գգւում  
Ակնապագաա ու լռին:

Բազմոցի վրայ նստեցրեց  
Իւր թոյլ հարսին գեղանի,  
Նայեց նորան այն ձևով  
Վարժես մէկ էլ չ'էր տեսնի.

Ըզզաց որ այս աշխարհում  
Այդ մէկ հոգուն ունէր լոկ,  
Սառած ճակատն համբուրեց,  
Դարձաւ — գընաց նա արդեօք:



XV

« Եւ նա գընաց: » Բոպէներն  
Յանկարծահաս մենուիեան  
Որքան յաճախ կը կրկնեն  
Այդ հարցն անկոչ ու դաժան:



« Նոր էր այստեղ... սակայն այժմ... »

Նա գուրս նեաուեց խելայիդ,  
Եւ ցարդ ցամաք աչքերից  
Վխտաց լացի մի հեղեղ:

Խոշոր, փայլուն և արագ

Այդ կայլակներ տեղացին,  
Քայց դեռ շրթունքն անբախտի  
„Մընտա բարեաւ“, շտտացին:

Քանդի, դառն այդ խօսքի մէջ,

Օրհասական այդ խօսքում,  
Ի՞նչ էլ յուսանք, հաւատանք  
Կամ խոստանանք—կայ լքում:

Ամեն գծին այդ դէմքի

Խաղաղ, սակայն գունաթող  
Գրօշմել է վիշտն, ինչ ջնջել  
Օրերն երբէք չեն կարող:

Փափուկ կապոյտն այդ աչքի,

— Սիրով լեցուն ու խոշոր —  
Սառեց, անթարթ գիտելով՝  
Ամայութիւնն հեռաւոր,



Մինչև նըշոյլ Կոնրադից  
Տեսաւ, բայց, ս՛հ, ի՛նչ հեռու,  
Եւ աչքն իբրև խելառի  
Դարձաւ, լողաց յետայնու

Թարթիչների յետևում,  
Մթին, փայլուն ու երկար,  
Յօղուած շողով տիրութեան,  
Որ շատ պիտի դեռ տեղարէ:

„Գընաց.“ կուրծքին թևերով  
Բաղխեց արագ և ուժգին,  
Ապա հեղիկ տարածեց  
Աղերսարար առ երկին:

Նայեց, տեսաւ լեռնացումն  
Ովկիանոսի գայրացեալ,  
Բաց առագաստն, ու նայել  
Չը հանդգնեց նա դարձեալ:

Դարձաւ դռնից դէպի ներս,  
Հոգին հիւանդ ու սնանկ:  
« Չէ սա երազ արդարև,  
Մենակ եմ ես ու տնանկ: »



XVI

Գաժան Կոնրադ ժայռից ժայռ  
Իջաւ արագ ու թեթեւ,  
Ոչ էլ փորձեց մէկ անգամ  
Աչքը թեքել նա յետեւ:

Բայց ցնցուեցաւ, կրքոր մերթ  
Այդ նեղ անցքի դարձերում,  
Ըստիպուեցաւ նա տեսնել՝  
Ինչ որ տեսնել չէր ուզում —

Մենիկ, շքնաղ իւր զգեսակ,  
Որ գէպի տուն դառնալիս  
Լեռնից նա էր որ առաջ  
Նորան ողջոյն էր տալիս:

Եւ Մադուրան ... — միզադէմ  
Եւ տխրամած առողիկն այդ,  
Որից ակննում էր հեռւում  
Միշտ նա զրաւիչ ճառագայթ —

Նորան նայել չէ կարող,  
Ոչ էլ խորհել այդ մասին.  
Հանդիստ կառնէր նորա մօտ  
Բայց կորստեան եղերքին:



Սահայն, կարծես, կանգ առած՝  
Յանձնել ուղեց մի վայրկեան  
Ծըրապիրն իւր՝ ալիքին,  
Եւ դէպքերին՝ ապագան:

Քայց սչ, լինել չէ կարող,  
Մի պետ՝ կոչմանն արժանի,  
Պընոջ վշտով կը հալուէր,  
Քայց անձնատուր չէր լինի:

Դիտեց իւր նաւն ու սաստիկ  
Յաջող գտաւ նա քամին,  
Եւ թռնութեամբ հաւաքեց  
Իւր ոյժն ամբողջ մըտային:

Նորից յառաջ նետուեցաւ,  
Եւ երբ լսեց նա հաղիւ  
Իւր ահանջին դարկելիս,  
Հեռուից, ձայներ բազմաթիւ,

Հսեց ժխորն անորոշ,  
Իրարանցում ծովեզրի,  
Նշանարան գոշիւններ  
Եւ շփշփոց թիերի,



Երբոր տեսաւ կայմի վրայ  
Ծովի ճարպիկ պատանուն,  
Նայեց քաշուող խարխախին,  
Կտաների բացուելուն,

Գիտեց ինչպէս ափունքից  
Թաշկինակներ շարժելով  
Չատեր հրաժեշտ լսելեայն  
Ճօճում էին դէպի ծով,

Իսկ ամենից առաւել՝  
Բոսորագոյն իւր դրօշակ  
Երբոր տեսաւ բարձրացրած  
Եւ ծրփայիս համարձակ,

Նա զարմացաւ թէ իրան  
Ի՛նչ պատահեց, որ բընաւ  
Թինչև անգամ մէկ վայրկեան,  
Սրտով այդքան փափկացաւ:

Աչքում՝ կըրակ ու սրտում՝  
Կատաղութիւն վայրենի,  
Իւր «Եսն» է զգում նա նախկին  
Նորից իւր մէջ կենդանի:

Ոսանեց, թուա ընդ առաջ  
Մինչև հասաւ այն սահման,  
Ուրկից ծովափն ըսկըսեց,  
Ժայռերն ուրտեղ լերջացան:

Այստեղ սանձեց նա թափն իւր.  
Եայց նըպատակ շունէր նա,  
Որ անդունդի դով քամուց  
Գէթ մի ըսպէ թարմանայ.

Այլ ձեր տայ մշտական  
Իւր սիգաշարժ քայլուածքին.  
Որ շրփոթուած չ'ենթարկուէ  
Գռեհիկների նայուածքին:

Զատ լաւ դիտէր նա դսպիւ  
Ամբոխն իւր այն արուեստով,  
Որ ըսբողում դոռողին՝  
Պահում է մերթ ապահով:

Նորա ձևեր՝ պանծաշուր,  
Կեցուածքն՝ հպարտ, հեռաւոր,  
Երեւուց խուսափող,  
Երեւիս՝ ահաւոր:



Արտայայտանքն՝ աննկուն,  
Աչքն ու հայեացք՝ մեծամիտ,  
Որ սանձելով ռամիկին՝  
Այնուհանդեձ չէ կոպիտ:


հնազանդութիւն կորդելու  
Չիրքից նա դուրկ չէր երբէք,  
Բայց երբ գրաւել ուղէր նա,  
— Ինքը, սակայն, միշտ անթեք՝ —

Երբոր հնչէր արձագանք  
Լսողների ականջին  
Նորա թոնի խորաձայն  
Սակայն փափուկ մեղեգին,

Միակ խօսքով սիրալիր  
Ահը սրտից կը վանէր.  
Նորա քաղցրը խօսքի մօտ,  
Չնչին՝ այլոց ընծաներ:

Բայց չէր այս ձևն հաճելի  
Նորա գոռող բընութեան,  
Գրաւելն, ինչպէս նուաճել  
Չէր նորա մօտ դուրեկան:

Պատանութեան կըքերից  
Այնպէս էր նա սովորել,  
Որ սիրողից, արժէք տար  
Հնադանդողին առաւել:



XVII

Նորա խմբից թիկնապահ  
Զուրջն է շտապում ամեն ոք.  
Զուան՝ նորա յանդիման:  
Ասաց, — « Պատրանսա են արդեօք: »

« — Այն, նոյն իսկ նաւի մէջ.  
Մակոյկն արդէն անըզբաղ  
Տիրոջս է լսկ ըսպասում: »  
« — Իմ սո՛ւր և իմ երի՛ճաղ: »

Նորա մէջքին նորա սուրն  
Իսկոյն և եթ կապուեցաւ,  
Զգուեց ուսին վերարկուն:  
« — Թո՛ղ գայ Պեղբօն. » նա եկաւ:



Նորա բարեն անելով  
Կոնրադ թերուեց, և սակայն  
Այնչափ, որ նա կը գիշէր  
Յարեկամին միմիայն:

« Առ' այս տեսրակն ու կարգն  
Ուշագրութեամբ ըս ըստը,  
« Պիտի դանեա նորա մէջ  
Գու պատուէրներ կարեօր:

« Կրկնապատկիր ըս պահակ.  
Իսկ նաւն հասաւ երբ այստեղ  
« Նոյն հրահանգին Անտէլմօն  
Թո՛ղ հետեւէ — և անշեղ:

« Զը վերջացած երեք օր  
— Եթէ քամին օգնէ մեզ —  
« Մենք կը դառնանք. իսկ մինչ այն՝  
Խաղաղութիւն լինի ձեզ: »

Այս ասելով ձեռք տուեց  
Ծովահէնին դործակից,  
Մակոյկն ապա ցաակեց նա  
Մի շարժումով խրոխտալից:

Ջրաթաթ ախ թ խակներ  
Գուրս են գալիս ու շողում,  
Յեկանելով շրջակայ  
Փոսֆորական ցոլացում: \*

Նաւը հասան, և կանգնած՝  
Նայում է նա ուշադիր,  
Ճշում են զիլ սուլիշներ  
Գործում ձեռքեր ջանածիր:

Տեսնում է նա թէ նաւադն  
Ինչքան աշխոյժ է և քաջ,  
Նաւը հնազանդ իւր զեկին,  
Եւ հաւանում բարեհաճ:

Թեքեց նայում ըն իւր հպարտ  
Պէպ Գոնսարլօն պատանի, . .  
Ինչո՞ւ ցնցունց, և կարծես  
Ներքուստ սղբում նա լինի:

---

\*) Գիշերը, մանաւանդ ջերմ կլիմայում, նաւի կամ նաւակի ամեն շարժումին հետևում է մի թեթև փայլաատակում որ կարծես սաւանակերպ կայծակ է ջրի վրայ տարածուած:



Աւանդ, դարձան այդ աշրեր  
Գէպ իւր ամբոց բարաշէն,  
Եւ հրաժեշտի վերստին  
Կարծես ապրեց նա բոպէն:

Տեսնում է նաւն արդեօք այժմ,  
Նա, իւր պաշտած Մազորան...  
Որքան սր այժմ էր սիրում  
Երբէք սիրած շէր նորան:

Սակայն կայ դեռ անեյու  
Չառ բան մինչև լուսորաց,  
Նորից դարձաւ դէպի յետ  
Սրտին նոր ոյժ ներշնչած:

Գոնսալվօյին նա առած  
Մտաւ ներքին մի օթեակ,  
Եւ իւր, յայանեց մի առ մի,  
Պըլան, միջոց, նըստատակ:

Նորա դիմաց՝ մի լամպա,  
Քարտով ծածկուած մի սեղան,  
Եւ նաւասառւ արհեստին  
Օժանդակող ամեն բան:

Խօսում են տար ու վիճում  
Մինչ կէսն անցած դիշերի:  
Ո՞ր ժամն է ուշ չափադանց  
Անձկահսկուն աշբերի:

Փշում է նոյն միջոցին  
Յաջող քամին շարունակ,  
Եւ նաւն յանաջ սրլանում  
Արծուի նրման համարձակ:

Յետ են թողնում կողերի  
Ամեն մի ծոց ու գրլուխ,  
Նաւահանդիստ ժամանում  
Արշալոյսից շատ կանուխ:

Եւ նըշմարում խորշի մէջ  
Գիշերային դիտակով  
Նաւերն հըղօր փաշայի  
Խարխիսի ձըգած ապահով:

Նաւերն ամեն համբեցին,  
Տեսան նաև որ ջահեր  
Լոյս են տալիս, բայց իդո՛ւր,  
Մասլէմներին անատրեր:




Անց են կենում մօտիկից,  
Վրտանդադերժ և անտես,  
Եւ, ուր պիտի դարանեն,  
Խարիսխ ձրգում վերջապէս:

Այնտեղ, նորա պաշտպանուած  
Մի բլլուրով բարձրաբերձ՝  
Վարող էին թագնուիլ  
Յայանութիւնից իսպառ դերժ:

Ապա ելան — սչ քընից —  
Նորա մարդիկ կորսվի,  
Պատերազմի պատրաստուած՝  
Թէ ցամաքի, թէ ծովի:

Այն ինչ յենուած՝ նոցա պես  
Ջուրն է դիտում փրփրալից.  
Խօսում անդորր, ու սակայն  
Խօսում է նա արիւնից:

Վ. Ե. Բ. Ա. Ն. Ո. Ն. Ա. Գ. Ն.



## ՆՈՒԱԳ Բ.

Conoscesti i dubiosi desiri ?

Dante.

Ճանաչում էք դուք անստոյգ  
խղճերը: ԴԱՆՏԷ

Ծփում էին Քորոնի  
Խորշում նաւեր քաջաղէն,  
Եւ Քորոնի շողշողում  
Պատուհաններ ցանցաշէն:

Քանդի խնջոյք, այս գիշեր  
Ունի սէյիդ, մեծ փաշան,  
Փարթամ խնջոյք ի պատիւ  
Ապագայի յաղթութեան,  
Երբ կը վարէ նա գերի  
Հրոսակն ամբողջ հէնկըի:



Իւր Ալլահով և սրբով  
Այսպէս Երզուեց Յամանլին,  
Եւ հընադանդ Փարմանի  
Ընդհանրական հրաւէրին՝

Եկան դէպի ծովեզերք  
Կոչուած նաւերն ամենայն.  
Չատ կայ նաւադ գումարուած,  
Եւ շատ՝ յսխորտ բարձրաձայն:

Քաժնուժ էին իրար մէջ  
Արդէն աւարն ու գերին,  
Հեռու՝ թէև, նորանցից  
Արհամարհուած թշնամին:

Մընուժ է սոսկ նաւարկել . . .  
Վաղուայ արևն անկասկած  
Սրիկաներին կը դանէ  
Զղթաներով կապկապած:

Իսկ թող քընէ պահակն այժմ  
Թէ այդ լինի ցանկանում,  
Ոչ թէ կարթնէ նա կառուի,  
Այլ կսպանէ երազում:



Յրիւ ևն գալիս նորանցից  
Սակայն, քաջեր բազմաթիւ,  
Յազուրդ իրենց աւիւնին  
Տալիս Յոյնին ի հաշիւ:

Հաւ է որքան յարմարում  
Չարմայաւոր քաջութեան  
Սուրբ քաշել պատեանից  
Խեղճ ըստրուկի յանդիման.


Կոխել նորա բնակավայր,  
Քայց շսպանել դեռ այսօր.  
Գըթած է մերթ նա սրտով,  
Թէև ձեռքով միշտ հըղօր.  
Եւ չէ դարկում բանդի նա  
Կարող է երբ կամենայ,

Եթէ բըմաց մի հաճոյք  
Առիթ չը տայ դարկելու,  
Որ վարժ պահէ նորա սուր  
Կռուի համար թ շնամու:

Չուայտութեամբ մեծազմուկ  
Անցան ժամերն իրիկուան.  
Եւ թնղ ժպտայ ով գիտէ  
Գլուխը սիրել սեփական:



Մօտէմներին ի պատիւ  
Խունկի եւն ծխում անխընայ,  
Եւ ամբարում անէծքներ՝  
Մինչև որ մարդ չըմբնայ:



II

Քարձր է բազմած դահլիճում  
Չալմայաւոր փաշան մեր,  
Չուրջը՝ — նորան կնթակայ —  
Մօրուքաւոր իշխաններ:

Փրլան արդէն վեջացաւ,  
Հաւաքուեցաւ և՛ ընթրիք:  
Խըմում էր նա շարտօնուած  
— Ասում էին — ըմպելիք:

Սուրճը, սակայն, ողջախոհ  
Չուրջ եւն տանում ըսարուկներ  
Պ լայեղում այլ ամեն  
Մուսուլմանի կրօնասէր:

Երկար շիրուխն օղի մէջ  
Ծուխ է լըցրել օթեակի,  
Պարուժ էին արմաներ \*  
Ի ձայն կոպիտ նուազի:

Իշխաններն այս կը մեկնեն  
Երբոր ծագեց արեգակ,  
Չէ կարելի վստահել  
Ծովին գիշեր ժամանակ:

Կերած, խմած այդ մարդկանց  
Քուներ հանգիստ կը լինի,  
Անկողնի մէջ մետաքսեայ  
Քան խորաուրորտ ովկիանի:

Քէֆ են անուժ երբ ուզեն,  
Կուուժ՝ երբոր ըստիպուին,  
Եւ վստահում յաղթութեան  
Պակաս քան թէ դուանին:

Իրենց թւով, և սակայն,  
Կարող էին կատարել  
Պոռոտախօս փաշայի  
Խոստումներից առաւել:

---

\*) Պարող կանայք:



III

Ներս է մանում կամացուկ,  
Ըզգուշութեամբ յարդալից,  
Եկած ըստրուկ մի պահակ  
Դըրսի զըրան առջևից:

Թերում խոնարհ իւր զըլուխ,  
Չեւրը տանում մինչ գետին,  
Նախ քան իշխում պատգամն իւր  
Յայտնել տիրոջ տկանջին:

« Փախած որջից հէների  
Դըրանը կայ մի դէրվիշ,  
« Եւ ինքն անձամբ կը պատմէ  
Ինչ որ ուզէք դուք ուրիշ: »

Առաւ աչքից սէյիդի  
Հաւանութեան մի նըշան  
Եւ գէպի սրահն ուղեցոյց  
Եզաւ մարդուն սրբազան:

Մթնականաչ հազուստով,  
Կուրծքին ծալած բազուկներ՝  
Ունէր նա թոյլ մի քայլուածք,  
Նաև ճնշուած մի պատկեր:



Ջշտից, և սչ տարիքից,  
Մաշուած լինի նա կարծես,  
Ապաշխարանք, և սչ վախ,  
Գոյնից զրկած՝ այդ երես:

Ունի նա սև դիսակներ,  
Ուխտով ձօնուած իւր Աստուան,  
Գլխին՝ բարձրը մի գլխարկ  
Հպարտ ունի նա կանգուն:

Զգել է շուրջն իւր մարմնի  
Երկար ըզզեստ լայնածալ,  
Ծածկել մի կուրծք դորանով  
Երկնից և եթ նուիրեալ:

Պատկառանքով՝ և սակայն  
Դիտում է նա պաղարիւն  
Թրին նայող աչքերի  
Հեռաքրքիր զննութիւն,

Որով շատոնք գէրվիշին  
Տալ կուղէին հարցումներ,  
Նախ քան նորանց փաշայի  
Կամքը խօսել արտօնէր:



IV

« Ուրկինց եկար դու գէրվիշ: »

« Փախայ որջից հէների: »

« Պատմիր սրտեղ և ինչպէս  
Ընկար նորանց դու գերի: »

« Սքալնօվից \* գէպ Սիօ  
Տարածեցինք առագաստ: »

« Այլահ, սակայն, չէր ժպտում  
ձամբորդներին ի նըպաստ: »

« Ինչքն ու վաճառք մօսլէմի  
Աւար դարձան գալուրին,  
« Ամուր նոցա շղթայով  
Կաշկանդուկցաւ մեր մարմին: »

« Գոյք շունէի ևս յարգի,  
Մահը չէր ինձ ահարկու,

« Կորաւ ինչ որ ունէի,  
— Ազատութիւն շրջելու: »

---

\* Այս անունը բնագրի մէջ Scalanovo է: Հափա-  
ղանց երկար լինելու պատճառով թարգմանաւ-  
թեան մէջ կրճատուել է: Ծ. Թ.

« Եւ վերջապէս ձկնորոսի  
Մի խեղճ մակոյկ գիշերով  
« Յարմարութիւն խոստացաւ  
Ինձ փախստեան ապահով:

« Օգտուելով առիթից՝  
Եյստեղ հասայ ես այսօր:  
« Ո՛վ է կարող վախենալ  
Քո մօտ, փաշա մեծազօր: »

« Ի՛նչ է անում այդ հրոսակ:  
Պատրանաւ է նա բուռական  
« Պաշտպանելու իւր աւար  
Եւ իւր ժայռեր գողաստան:

« Գիտեն նորա թէ որչափ  
Մենք ոյժ ունինք ռազմային,  
« Որով բոյնն այդ կարիճի  
Մատնենք պիտի բոցերին: »

« Ե՛րբ աչքն առիթ կունենայ,  
Փաշա՛, կապուած մի գերու,  
« — Լալով վասն իւր փախստեան —  
Լրտեսութիւն անելու:



« Լսում էի ևս միայն  
Չայնը ծովի փրփրալից,  
« Որ ինձ թոյլ ապլ չէր ուզում  
Երթալ իբաց իւր ափից:

« Տեսնում էի ևս միայն  
Երկինք, արև փառահեղ,  
« Օրուաս համար դերութեան,  
Կարի կապոյտ ու շքեղ:

« Ըզգում, թէ ինչ աղատի  
Սրտին լինի ցնծարեր՝  
« Փշրէ պիտի շղթան իմ,  
Նախ քան սրբրէ իմ աչքեր:

« Բայց իմ գիւրին փախուստից  
Դատել կարող ևս արդէն,  
« Թէ ինչ վրտանդ է սպառնում  
Իրենց, նորա շը գիտեն:

« Զուր կը լինէր այլապէս  
Ամեն աղերս և աշխատ,  
« — Թէ հսկէին աշալուրջ —  
Որ դուրս գայի ևս ազատ:

- « Իմ խուսափում շքտեսնող  
Քիշերապահն անտարբեր,  
« Չի նշմարի եւ նոյնպէս  
Երբ մերձենան քո նաւեր:
- « Թոյլ եմ, փաշա՛, պէտք է ինձ  
Սովիս ընդդէմ ուտելիք,  
« Պիտի հանդշեմ ես նաև՝  
Չաստ են ցնցել ինձ ալիք:
- « Արտօնութիւն երթալու  
Չնորհիր ուրեմն, ս՛վ սէյիդ,  
« Խաղաղութիւն լինի քեզ,  
Խաղաղութիւն բոլորիդ: »
- « Կայ, դէրվի՛շ, կայ. քեզ տալու  
Հարցեր ունիմ ես դարձեալ:  
« Տեղըդ նստիր. շնս լսում.  
Հրամանս է քեզ դեռ. շերթալ:
- « Նստիր, և իմ ըստըտւկներ  
Պիտի բերեն քեզ ընթրիք.  
« Դու շնս լինի սովամահ  
Խնջոյք ունին ուր մարդիկ:



« Երբ կշտացար, պատրաստուիք  
Որոշ կերպով ու կարուկ  
« Պատասխանել հարցերիս.  
Ես չեմ սիրում հանելուկ: »

Յայտնի չեղաւ թէ ինչ բան  
Ցնցեց մարդուն երկիւղած,  
Որ չէր, կարծես, դիվանին  
Նայում սիրով ապօրուած:

Իբր անօթի՝ նա ճաշին  
Չէր ըսպասում անհամբեր.  
Ցոյց էր տալիս սուղ յարգանք  
Առ այլ ամեն հիւր ընկեր:

Չէր դա նըշան տժգոհի  
Որ այդ գէմքին երևաց,  
— Մի գըրգըռուած բոպէում —  
Որն է՛ անցաւ սըրնթաց:

Նստաւ նորից նա լռին.  
Եւ այժմ փոխուած իւր պատկեր  
Քարձեալ առաւ մի հանգիստ,  
Որ քիչ առաջ դա չունէր:

Քերին նորա կերակուր,  
Քայց համագամ սընունդից  
Խորշում է նա, կարծես թէ  
Մի բան լինէր թունալից:

Երկար կըրած լինելով  
Անօթութիւն և աշխատ՝  
Ինչո՞ւ նա ճոխ սեղանից  
Չէր օգտոււմ իրառամ:

« Դէրվի՛շ, կարծես բրիտանեան  
Լինի քո ճաշ պատրաստող,  
« Եւ կամ սեպու՞մ լինիս դու  
Քարեկամիս՝ քեզ ոսոխ:

« Աղին ինչո՞ւ չես դալշում  
— Անսուտ ուխտի այդ նըշան —

« Որ, ս՛վ ուտէ, նորա սուր  
Կը բըթանայ յաւիտեան.

« Որ միացնել հաշտութեամբ  
Գիտէ կռուող բանակներ,

« Եւ շողկապել կորօր պէս  
Ցեղը ցեղին արնատէր: »



- « Աղը գիտէ համեմել  
Միայն փարթամ կերակուր,  
« Քայց իմ կերածն ու խըմած  
Արմատ է սոսկ ու պարզ ջուր:
- « Իմ խիտա կարգով արգիլուած՝  
Ես չը պիտի մօտենամ  
« Ուտելիքի, ուր լինին  
Ոստի, կամ թէ բարեկամ:
- « Գուցէ թուայ ձեզ օտար . . .  
Թէ կայ վրտանդ այդ բանում  
« — Ինձ, որ մենակ եմ այստեղ —  
Ինձ է դա լսի ըսպառնում:
- « Քո գոյրն ամբողջ թէ տաս ինձ,  
Ո՛չ, դահն անդամ սուլթանի,  
« Թէ ոչ, մենակ ըսպէիս,  
Չեմ մերձենայ սեղանի:
- « Մարգարէի բարկութեամբ  
— Թէ ուխտ կատրեմ սրբազան —  
« Դէպ Մէքքայի սրբավայր  
Գոցուէ պիտի իմ ճամբան: »

« Ըստ լաւ. ինչպէս դու կ'ուղես —

Դու ճգնաւոր խոտակեաց —

« Մէկ հարց կըս, և գրնան

Խաղաղութեամբ դու իբաց:

« Քանի մարդ . . . հա՛, բայց անշուշտ

Լոյս չէ բացուել տակաւին:

« Ի՞նչ աստղ, բայց սո՛ւ, ի՞նչ արեւ

Ծագեց խորշի կրեօին:

« Յոցի մի լիճ . . . հօ՛ . . . մի դաւ . . .

'Իբանց . . . իբանց . . . իմ սուսե՛ր . . .

« Հեռու ինիմ և այսպէս

Վառւում ինին իմ նաւեր:

« Այս էր քո լուր, կե՛ղծ դէրվիչ՞

Հաղա՛ր անէծք այդ գլխիդ.

« Ըսպանեցէք, բռնեցէք,

Լրտես է դա նենգամիտ . . . »

Դէրվիչն ելաւ, երբ խորշից

Լոյսը պայթեց բոցերի.

Չաղդեց պակաս դարմացում

Տեսքն այդ փոխուած պատկերի:



Դէրվիշն ելաւ, ոչ ինչպէս  
Ունէր հազուստ սրբադան,  
Այլ թէ կռուի պատրաստուած՝  
Մի սպառազէն ռազմական:

Զարկեց, ձգեց իւր գլխարկ,  
Պատուեց երկար վերարկուն,  
Կուրծքը ցոլաց զբահաւոր,  
Սուրը ցատկեց շողշողուն:

Սեղմ ու փայլուն՝ նորա խոյր,  
Փետուրը՝ մուժ ու մըռայլ,  
— ձակատն՝ ամսլոտ առանել,  
Աչքն՝ աւելի սևափայլ —

Ներկայացան հանդիսին  
Որպէս ոգու աֆրիտեան,  
Որի գարկից դիւային  
Յոյս չէր մընում փրկութեան:

Ըփոթութիւնն այդ անլուր,  
Այդ հրկիզում ծխալից,  
Վերից՝ կարմիր բոցերի,  
Եւ ջահերի՝ ներքևից,



Մըրի շառաշ, վախի ճիշ  
Եւ ունոցնեք վայրենի  
Տուին վայրին երկրական  
Մի մթնուորտ գեհեհի:

Ձէին տեսնում ըստրուկներ  
— Վազվզելով խելասպառ —  
Թէ ոչ ելերքն արիւնտա,  
Թէ ոչ ալիք հըրավառ.

Ձէին լսում փաշայի  
Գոչն ու հրաման դայրագին:  
Նորա՛ բանեն այդ մարդուն—  
Աւելի շուտ՝ Չէյթանին:

Տեսաւ այդ ահն ու դսպեց  
Կոնրադ լքումն առաջին,  
Որով վճռեց նա մեռնել,  
Բայց չը թողնել իւր տեղին.

Քանզի կանուխ շափաղանց  
Եւ շափաղանց ջանասէր՝  
Բոցը վառեց նաւաստին,  
Նախ քան դէրվիշն արտօնէր:



Տեսաւ այդ անն ու քաշեց  
Գօտուց փողն իւր ռազմական,  
Հնչեց մի ձայն կարճ ու սուր  
Եւ ըստացաւ պատասխան:

« Լաւ էք հասել, քան թէ տղերք:  
Ինչո՞ւ եկաւ ինձ կասկած  
« Մըտած ելով թէ դիտմամբ  
Մենակ էի ես թողուած: »

Սրբեց երկար նորա թի...  
Սրբի շանթող շառաչիւն  
— Վասն իւր նախկին վարանման —  
Թափեց առտա քաւութիւն:

Ինչ ըսկըսեց նոցա վախ  
Այն լքացաւ այդ թափից.  
Չատը դողաց վատարար  
Մէկի միայն սարսափից:

Հերձապատառ շարմաներ  
Ցրիւ են եկել սենեակում,  
Գաշտական գլխին սեփական  
Մէկ ձեռք լինել շէր իշխում:



Նոյն իսկ փաշան ընկճուած  
Բարկութիւնից, դարմանքից,  
Յետ է քաշուամ, թէպէտև  
Գոռում է նա սպառնայից:

Վախկոտ չէ նա. բայց մօտիկ  
Լաւ չէ լինել այդ մարդուն.  
Զըփոթութիւնն այնքան է  
Հսկայացրել թշնամուն:

Աչքը մի վայր դրաւ եցին  
Վառուող նաւերն ովկիանից.  
Քանդեց մօրուքն ի վերջոյ  
Եւ դուրս փախաւ փրփրայից:

Քանդի հէներն այս ժամին  
Մտան դռնից հարէմի,  
Եւ մահ բաժին կստանար  
Ով գանուէր թշնամի:

Անդ ծնկաչոք ոռնայով  
Խելակորոյս ապշութիւն  
Սուրն է ձգում, բայց իդուր,  
Յորդ է հոռում դեռ արիւն:



Հէներն արդէն խուժելով  
Դէպի այն կողմ թափուեցան,  
Ուրտեղ նորանց, Կոնրազի .  
Փողը կոշեց օգնութեան:

Եւ դոհերի հառաչանք  
Եւ կեանք խնդրող աղերսներ  
Ցոյց են տալիս թէ սրբան  
Վարպետ կռուել նա գիտէր:

Բարձր են դոչում, գտսելով  
Նորան մենակ ու դաժան,  
Ինչպէս մի վաղը իւր որջում  
Յօշոտելիս ամեն բան:

Կարճ է բարեն այդ մարդկանց.  
Նորանը՝ կարճ առաւել.  
« Լաւ, բայց փաշան խոյս տուեց,  
Պէտք է նորան ըսպանել:

« Ըատ է արուած . . . աւելին

Սակայն կայ դեռ անելու.

« Նոցա նաւերն այրուեցան —

Նոցա բաղաք ոչ ինչո՞ւ: »



V

Խըլից մի ջահ ամեն որ  
Լըսեց հրամանն այդ և իժ,  
Ու շէնքն ամբողջ վառուեցաւ  
Դռնից մինչև մինարէժ:

Սէզ աշքերում Կոնրադի  
Փայլեց հրճուանք դըժընդակ,  
Բայց շուտ մարեց, քանզի նա  
Հսեց կանանց աղաղակ:

Եւ ձայնն իբրև մահաղանդ  
Ցնցեց յանկարծ այդ մարդուն,  
Որի սրտին աղղում շէր  
Պատերազմի վայնասուն:

« Ո՛հ, այդ հարէմն է բայցուած . . . »

Կանանց դալշիլ ձեզ երբէք

« Չիցէ ի դին ձեր կեանքի .

Մենք կին ունինք — յիշեցէք:

« Այդ վրէժն երկինք կը լուծէ

Անշուշտ նորանց ի հաշիւ —

« Այր մարդն է մեր թշնամին,

Եւ նորա դէմ մեր կռիւ:



« Ո՛հ, ես առաջ մտաացայ . . .  
Սակայն Աստուած չի ներքի,  
« Եթէ սպառնայ իմ խօսքով  
Վրտանդ կեանքին թոյլերի »

« Երթում եմ ես, ով կուղէ  
Թո՛ղ հեռէ իմ քայլին :  
« Ուշ չէ որ դէթ մէկ մեղքից  
Թեթևացնենք մեր հոգին : »

Կոտրեց դռներ, բարձրացաւ  
Աստիճաններ ճարճատուն.  
Ոտքն այդ այրող գեանի վրայ  
Կարծես թէ չէր ըզգայունք

Կապ էր գալիս նորա շունչ  
Ծուխից մթին և ըստուար,  
Բայց սենեակից նա սենեակ  
Բացաւ բռնի ճանապարհ :

Փնտռեց, գտաւ, աղատեց,  
Տարաւ ամեն աւաղակ  
— Անուշադիր թողնելով —  
Մի հրապուրիչ մրցանակ :



Չանում էին նոցա վախ,  
Պահում նոցա թոյլ իրան,  
Քոլոր խնամքով, արժանի  
Գեղեցկունուն անպաշտպան:

Սյապէս դսպել դիտէր նա  
Իւր հրստակին անընտել,  
Եւ արեան մէջ շաղախուած  
Չեռքերն անգամ կասեցնել:

Քայց ո՞վ է նա, որին դուրս  
Պետք տարաւ հէների,  
Հեռո՞ւ վայրից ռազմային  
Եւ հրրավառ աւերի:

Ո՞վ է, թէ ոչ սխերիմ  
Իւր թշնամու սիրունին.  
Գարձեայ մի սարուկ — թէպէտև  
Հարէմական թագունին:





VI

Պոնրադ միջոց շատ շունէր  
Յարեւելու գեղանուն,  
Պամ հաւաստիք բաշխելու  
Նորա սրաին դողդոջուն:

Քանզի մինչդեռ գուպարից  
Գուժը խլեց ժամանակ,  
Այն թշնամին, որ առաջ  
Փախաւ հեռու և արագ,

Զարմանահար տեսնելով  
Իւր հետքն իսպառ անհալած՝  
Պարճեց իւր քայլ, կանգ առաւ  
Եւ խմբուեցաւ խրախուսուած:

Սէյիգն իսկոյն տեսաւ այս  
Եւ նրկատեց թէ որքան  
Սակաւ էր թիւն հէների  
Ընդդէմ նորա դօրութեան:

Իւր սրխալից նա շիկնեց,  
Երբ դիտեցին իւր աչքեր  
Զբիտթութեան ու վախի  
Թողած արիւն և աւեր:



« Ալլահ, Ալլահ, » վրէժխընդիք  
Թուողն ուռեց այդ ձայնի:  
Ամօթն արդէն կատաղած՝  
Պիտի բուէ կամ մեռնի:

Արիւն՝ արեան փոխարէն,  
Եւ հըրկիզում՝ հըրկիզման:  
Ցարդ այնքան լաւ բարձրացող  
Հոսանքն իջաւ յաղթութեան,

Երբոր դայրոյթն յետ դարձաւ  
Դէպի նորոգ մաքառում,  
Երբ ցարդ յաղթող մի ռազմիկ  
Գեանքն է փրկել աշխատում:

Գոնրադ տեսաւ այդ վրտանդ,  
Տեսաւ ինչպէս իւր գինուոր  
Յետ բաշուելով՝ թուլացաւ  
Գրոհի գիմաց նորանոր:

« Մէկ ճիգ կըս կոտրելու  
Ջրջապատող այդ շղթան: »  
Խմբւում են կաղմ, յարձակւում,  
Ջապւում... կորաւ ամեն բան:




Եւ արդ մօտից պաշարուած  
Եւելի նեղ օղակում՝  
Անյոյս, բայց ոչ անարի  
ձղնում են դեռ ու կոււում:

Արդ շարքերով ամբակուռ  
Չէ մարտնչում այդ հրոսակ,  
Սեղմուած, ջարդուած, կոտորուած՝  
Վայր են թափւում ոտնատակ:

Ջարկում է բայց ամեն որ  
Մենիկ, անշեղ ու լռին  
Եւ ցած ընկնում ուժասպառ,  
Բայց ոչ պարտեալ տակաւին:

Նոյն իսկ վերջին շնչի հետ  
Կատարելով մի պարտիր,  
Մինչև մահուան ձեռքի մէջ  
Չողար մահուան իւր գործիր:





VII

Սակայն նախ քան ընդհարուին  
Այդ բանակներ նորահազմ,  
Հարք՝ շարքի դէմ, ձեռք՝ ձեռքի,  
Նորից մղեն պատերազմ,

Գուլնար, իսպառ անվընաս,  
Հարէմական իւր խմբով,  
Մի կրօնակցի յարկի տակ  
Ջեռեղուեցաւ ապահով:

Եւ սրբուեցան փափկութեամբ  
— Հրամանն այս էր Գոնրադի —  
Կենաց համար ու պատուոյ  
Լացող աչեր դեռատի:

Եւ երբ Գուլնար սեռահայ,  
— Այդ մանկամարդ շքնադիկ  
Յիշեց ինչպէս քիչ առաջ  
Տանջոււմ էր ինքն յուսալիք,

Զատ դարմացաւ այն հէնի  
Վարքից աղնիւ ու պարկեշտ,  
Որով փափկու՛մ էր հայեացքն  
Ու մեղմանում նորա շեշտ:



Այդ աւաղակն — անլուր բան —  
Արեամբ ներկուած, արնահեղ,  
Հեղ էր թւում բան փաշան  
Իւր ըսպէին սիրաղեղ:

Փաշան, կարծես, սիրելով  
Իւր ըսարուկին ախրաբար՝  
Ձնորհ էր անում իւր սրտով.  
Եւ նա հաճոյք պիտի զգար:

Հէնը նորան պաշտպանեց,  
Վանեց նորա զարհուրանք  
Այնպէս, որպէս թէ կընոջ  
Նա պարտ լինէր մեծարանք:

« Սըխալ բան է . . . սչ, վատթար.

Կընոջ համար՝ նոյն իսկ սին . . .

« Ըստ եմ, սակայն, ցանկանում

Նորից տեսնել այդ պետին:

« Որ երախտախբս յայտնեմ գէթ

— Ինչոր վախն իմ մտապալ —

« Կեանքիս համար . . . չը յիշեց

Սիրող իմ տէրն այդ բընաւ: »



VIII

Տեսաւ նորան ուր մահուան  
Խիտ էր նախճիրն աւելի,  
Խլուած՝ կողքից ( ոչ անշուշ )  
Երջանիկագոյն մեռեալի:

Զատ իւր խմբից, կռուելիս՝  
Իւր դէմ ամբողջ մի բանակ,  
Որ թանկ սեպեց իւր շահած  
Նորա տուժած յաղթանակ:

Արիւնահոս ու տապաւտ,  
Զուրկ մահուանից որոնած,  
Եւ կենդանի, որ կըրէ  
Ամբողջ պատիժն իւր շարեաց:

Խլուած միայն քարշ գալու  
Եւ ապրելու, բայց իդո՛ւր,  
Քանդի նոյն իսկ միջոցին  
Իւր դառնութեանն անձնատուր՝

Խորհում է նոր տանջանքներ  
Վրէժի ծարաւ բարկութիւն  
Եւ պահպանում հեղելու  
Իւր աղատած այդ արիւն —



Քայց միշտ կաթիլ առ կաթիլ:  
Կուզէր փաշան ռիսակալ  
Տեսնել նորան մեռնելիս՝  
Քայց ոչ իսպառ մահացեալ:

Սա է, որին քիչ առաջ  
Գուլնար տեսաւ յաղթական,  
Կարմիր ձեռքի մի շարժով  
Արձակելիս մի հրաման:

Ճէնց ինքն է դա. ղինաթափ,  
Քայց խրոխտ՝ նորա կերպարանք.  
Կեանքը — որ նա դեռ ունէր —  
Նորա միակ ափսոսանք:

Ջէրքերն էին աննրշան,  
Քայց մի կամքով ըստացուած՝  
Որ դարկողի, նա կուզէր,  
Չեռքն համբուրել անկասկած:

Այդ բազմաթիւ թշնամուց  
Մէկն էլ չկար, որ ուզէր  
Նորա հոգին ուղարկել . . .  
— նա չէր խնդրում՝ դէպի վեր:



Այդ ամենից նա՛ միայն  
Պիտի մընար կենդանի,  
Որ ամենից շատ կռուել —  
Չատ էր ուղել որ մեռնի:

Նա զգաց ինչ որ մարդկային  
Սրտերն անշուշտ պիտի զգան,  
Երբոր նորանց վայր ձրզէ  
Բախտի անիւ դաւաճան:

Նա զգաց անցեալ իւր մեղքեր  
Եւ յաղթողի սպառնալիք  
— Տանջանքներով յարատե  
Վըճարելու իւր պարտիք:

Նա զգաց, այն, խորապէս . . .  
Բայց հալարտանքն իւր վայրագ  
Յ'այսօր դարձած՝ դեկավար,  
Այսօր դարձաւ մի դիմակ:

Եւ նորա սէզ, ինքնամփոփ  
Գէճքի վերան առնացի  
Մի յաղթողի դրօշմը կայ  
Աւելի քան յաղթուածի:



Թէև տըկար՝ ու վէրքից  
Մարմինն ամբողջ փայտացած՝  
Բայց իւր խաղաղ հայեացքով  
Այլոց այդպէս չը թուաց:

Թէև գուհիկ ամբոխի  
Աղաղակներ հեռաւոր  
— Երբ վախ չըկար — դարձան այժմ  
Անարգալից մի ժխոր,

Բայց ռազմիկներ, որ մօտից  
Նայում էին այդ դէմքին,  
Ձէին նորան անպատոււմ,  
Որից դեռ նոր սոսկացին:

Եւ գէպի բանտ սւղեկցող  
Բիրտ զինուորներն ամենայն  
Դիտում էին նորան մերթ  
Եւ սարսափում լռելեայն:





IX

Բժիշկն այնտեղ շուղարկուեց  
Նըպատակով բարեպէր,  
Այլ որ տեսնէ թէ սրբան  
Ցաւ կըրելու կեանք ունէր:

Գտաւ այնքան, որ բեռնէ  
Քղթաներով ծանրակուս,  
Որից կորզել կը լինէր  
Չարշարանքով մի սարսուս:

Վաղը, այն, անկասկած,  
Վաղուան մանող արեզակ  
Ցաւը նորա կը դիտէ  
Ցըցի վերայ դըժընդակ:

Եւ մշտական շիկնանքով  
Երբ բարձրանայ նա նորից  
Տեսնէ պիտի թէ ինչպէս  
Զոհը կըրեց այդ կսկիծ:


Ամեն պատժից սա է սոսկ  
Երկարատեն ու վատթար,  
Որ խիստ, անլուր ցաւի հետ  
Ունի ծարաւ շարաշար:



Ծարաւ, որին շէ գայիս  
Մահը որպէս մի բարիք,  
Թռչում են մինչ անօթի  
Անգղեր սիւնի բոլորաիք:

«Ո՛հ, ջն՛ւր,» ահանջ շէ դընում  
Ոխը, սակայն, ժպտալից.  
Եթէ խըմէ, մեռնելով  
Նա կազատուի տանջանքից:

Այս էր նորա գատակնիք:  
Գնացին բժիշկ և պահակ,  
Թողած զոռոզ Գոնրադին  
Զղթայակապ ու մենակ:



X

Զուր աշխատանք կը լինի  
Պատմել նորա գղացումներ,  
Եւ թէ գորա ինչ էին —  
Զոհն էլ գուցէ չը գիտէր:

Կայ մի ներքին պատերազմ,  
Կայ մի քառս մտաւոր,  
Երբ որ ցնցուած, միախառն  
Ողու սարերքը բոլոր

Փոթորկայոյդ ոյժերից  
Փուռում են մութ ու խրոսով,  
Եւ կըրճըտում առամնիւր  
Անապաշաւ խայթերով:

Այդ սատանան ձեռնածու,  
Որ չէ խօսում նախ բընաւ,  
Եւ միշտ գոշում, « Զասացի »  
Երբ գործն արդէն վերջացաւ:

Զո՛ւր ձայն: Գուցէ տառապող,  
Սակայն անթեր մի հոգի  
Ըմբոստանայ, կսկըծայ —  
Թոյլն է ծանօթ զղջանքի:

Իւր այդ ժամում մենութեան,  
Երբ շատ է զգում ամենից  
Ինչ որ ունի, և որին  
Եսն է միայն գիտակից.



Երբ ոչ մի միտք կամ խորհուրդ  
Սրտում բազմած տիրապէս՝  
Այլ մտքերին չէ ստիպում  
Մընալ անխոյզ և անտես.

Անց է կացնում իւր աչքից  
Հոգին վայրի մի պատկեր —  
Հազար անցքով վխտալիս  
Կորստառիթ իւր գործեր,

— Սիրոյ մորմոք ու փառքի  
Երազն արդէն մերձամահ,  
Չուք ու պարծանք՝ վրտանգուած,  
Կեանքը՝ մահուան ենթակայ.

Կորուսան ոյժի պարծեցեալ,  
Զը ճաշակուած բերկրացում,  
Ոխ կամ զգուանք առ նորանց  
Որոնց շահն է մեր անկում.

Անցեալն՝ անյոյս, ապագան՝  
Այնքան վրաաղ, որ շունինք  
Միջոց անգամ խորհելու,  
Դէպի գըծ ոխք թէ կրկինք.



Գործեր, մտքեր ու խօսքեր  
Գուցէ ցայսօր շը յիշուած  
Սյնքան ուժղին որքան այժմ —  
Քայց և այնպէս անմտաց.

Քաներ, որոնք անելիս  
Չնշին՝ և կամ դուրեկան,  
Թւում են այժմ ոճիրներ  
Մարի լոյսին դննական.

Վարագուրուած շարութեանց  
Գիտակցութիւն նողկալի,  
Մեզք, որ պակաս կերախտ չէ  
Քանղի թաքուն՝ աւելի.

Եւ շատ բաներ, որոնցից  
Խրտչէ պիտի մի տեսնող  
Ինչ որ այդ բաց գերեզման,  
Այն է մի սիրտ անըսքող

Նեխուածք ունի ցաւերի.  
Մինչև հոգուց վշտագին  
Հըպարատութիւնն արթնելով  
Խըլէ, փշրէ հայելին:



Գիտենն կըրելոյ, թագցընել  
Արիութիւնն ու հպարտանք  
— Առաջ ու յետ անկուսից —  
Սմենն, ամեն տառապանք:

Բայորն ունինն մի երկիւղ,  
Բայց վախն ով որ քիչ մատնի  
Նա եղծաւորն է միակ  
Խնկարկութեան արժանի.

Ոչ մեծախօս ու փախչող  
Թշուառ երկչոտն իրընէ,  
Այլ որ մահուան աչքի մէջ  
Նայէ անթարթ ու մեռնէ.

Որ համողմամբ այդպիսի  
Գօտեպնդէ իւր հողին  
Նւ կէս ճամբին հանդիպէ  
Ըսպառնացող վրտանդին:





XI

Քերդի վերին սենեակում,  
Տակին ծանրը շղթայի,  
Մենակ նստած է Կոնրադ —  
Անդօր գերին փաշայի:

Ճարակ դարձաւ բոցերին  
Նորա շքեղ բնակարան,  
Զեանդուեցան տմրոցում  
Թէ բանաարկեալ թէ դիւան:

Իւր վիճակից գանգատուիլ  
Կոնրադ բընաւ շէր կարող,  
Նոյն վիճակին կենթարկուէր  
— Եթէ յաղթուէր — իւր ոստխ:

Քննեց իւր կուրծքն յանցաւոր  
Իւր այդ ժամում մենութեան,  
Քայց և՛ սրտին ներշնչեց  
Տոկունութիւն առնական:

Մէկ միտք միայն նա տանել  
Չէր յանդգնում, կարող չէր,  
« Ո՛հ, ինչ կզգայ Մադորան,  
Երբօր պատմեն այս լրեր »:



Այդ ժամանակ և սոսկ այդ  
Չեռքը ցնցեց շառաշուն,  
Փորձեց փշրել իւր շղթան  
Անդօրութեամբ գայարուն:

Քայց շուտ գտաւ, կամ կեղծեց,  
Կամ երազեց ըսփոփանք,  
Եւ ժպտալով այսպանեց  
Ինքն իւր ներքին տառապանք:

« Եւ այժմ թնդ ինձ շարշարեն  
Երբոր վճռեն, կամ ցանկան,  
« Որպէսզի լաւ դիմանամ  
Ես պէտք ունիմ հանգստեան »:

Այս ասելով դէպ խշտին  
Սողաց, քաշուեց նա դանդաղ  
Եւ ինչ որ էլ երազէր՝  
Նա քուն մտաւ անյապաղ:

Երբ բըռընկեց այդ կռիւ  
Հազիւ լինէր կէս գիշեր,  
Այդքան շուտով անել տալ  
Գիտէր Կոնրադ իւր մտքեր:

Վատնելի իդուր ժամանակ  
Ձէ արտրժում Աւերած,  
Հաղիւ այդ կարճ միջոցում  
Թողեց ոճիր նա շարած:

Հասաւ թէ չէ՛ մէկ ժամում  
Հանդէս եկաւ մեղ այդ մարդ  
Ծպտեալ, յայանի, յաղթական,  
Գերի, կասուած, մահապարտ,

Ծովում՝ մի հէն տարագիր,  
Իաշտում՝ ռազմի կիսառտուած,  
Ստորելիս, փրկելիս,  
Սալանաւոր և բընած:



## XII

Քընած է նա. նայողին՝  
Խողաղուժեամբ ակնյայտ:  
Խոր է ու լուռ նորա բուն —  
Ռէր էր թէ մահ լինէր այդ:



Ո՛վ է կանգնած ու դիտում  
Նորա հանգիստն անդորրիկ,  
Այստեղ շունի բարեկամ,  
Գնացին նորա թշնամիք:

Հրկշտակ է դա, ննջողին  
Յերած ներում ու շքնորհ:  
Ո՛չ, դէմք է դա երկնային,  
Թէև կաղմով երկրաւոր:

Ճերմակ թևով վեր բռնած  
Ունի նա լամպ լուսասրօղ,  
Որ շք փայլէ քնածի  
Թարթիչներին նորա շող:

Թարթիչ, որ այժմ շէ բացւում  
Թէ ոչ 'ի ցաւ և 'ի վիշտ,  
Որ բացուելով՝ կը գոցուէր  
Գուցէ մէկ էլ, և ընդ միշտ:

Այդ կի՛նն՝ այստով գունագեղ  
Եւ աչքերով սևահուր,  
Չազանակեայ գէտերով  
Գոհարադարդ ու գանգուր,



Փէրու նրբին իրանով,  
Ոտքով ճերմակ ու բորիկ,  
Որ գեանի վրայ որպէս ձիւն  
Իջնում է մեղմ ու լռիկ,

Հակողների շարքերից  
Եւ այդ ժամին մթութեան,  
Ինչպէս եկաւ նա այստեղ:  
Ո՛հ, նախ հարցրո՛ւ թէ ինչ բան

Մի կին անել չի դօրի—  
Մի կին՝ մղուած քաջարար  
Մատղաշութեամբ ու գըթով՝  
Ինչպէս որ դու, սփ Գուլնար:

Կարող չեցաւ նա ննջել.  
Եւ մինչ մըտած 'ի խոր բուն՝  
Փաշան ծպտեալ հիւր ունէր  
Երազներում մրմնջուն,

Նա վեր կեցաւ, առնելով  
Նըշանակիր մատանին,  
Որ խաղալով շատ անգամ  
Կըրած ունէր իւր մատին:




Եւ դորանով անարգել  
Մօտիցն անցաւ դէպի բանտ,  
Պահակների քընէած  
Այդ նըշանին հընադանդ:

Թմբած կուռի ճիգերից,  
Որպէս և ծանր աշխատի՝  
Նորանց աշբերն, հանգստեան  
Նախանձեցին Կոնրադի:

Աշտարակի դըրան մօտ  
Սառած, նիրհուն, ուժասպառ,  
Գեանի վերայ փռուելով՝  
Նորա հսկում շին իսպառ:

Հազիւ դըլուխ շարժեցին,  
Գոյնը տեսան մատանու  
Եւ շուղեցին իմանալ  
Ո՛վ էր բերել և ինչո՞ւ:



XIII

Պիներ նայեց ապշահար.

« Եւ ի՛նչ հանդիստ է քքնած,

« Ողբում են մի՛նչ այլք նորա

Անկում և կամ աւերած:

« Եւ ես այստեղ յածեցի

Հանգստադուրի և անբուն,

« Այսպէս յանկարծ ի՛նչ հըմայք

Սիրել տուեց այս մարդուն:

« Վեանքս է փրկել նա իրօք...

Եւ աւելին քան թէ կեանք.

« Ինձ և իմօնց ազատեց

Վատթար բանից քան տանջանք:

« Ուշ է խորհել... բայց հանդիստ... »

Արթնում լինի նա կարծես.

« Ի՛նչ ծանր հասաջ... նա ցնցուեց,

Ահա դարթնեց վերջապէս: »

Նա վեր տուաւ իւր գլուխ.

Աչքը, լուսից շլացած՝

Թէ ճիշտ էր ինքն ինչ տեսաւ,

Ունէր կարծես դեռ կասկած:



Չարժեց իւր ձեռք— և շղթան  
Չառաշելով կոստարար  
Ասաց թէ շէր նա ձրգել  
Գեռ ևս այս կեանք և աշխարհ:

« Ի՞նչ է այս կազմ, եթէ ոչ  
Օղից կերտուած մի էակ:  
« Բանտապահիս պատկերն ինձ  
Թւում է խիտ գեղունակ: »

« Այլ հէ՛ն, ինձ չես ճանաչում,  
Բայց շնորհապարտ եմ ես քեզ  
« Քո մի դորժի պատճառով,  
Որից յաճախ արած չես:

« Նայիր նորան, որ բոցից  
Աղատեցիր սոսկալի,  
« Եւ հրոսակից քո դաժան  
Քան բոցն անեղ աւելի:

« Եկել եմ ևս գիշերով  
Եւ չը գիտեմ թէ ինչու՝  
« Մահըդ տեսնել չեմ ուզում . . .  
Ես քեզ չեկայ վնասելու: »



« Ուրեմն այստեղ միակն ես,  
Բարի տիկին, որ աչքիդ  
« Հաճոյք շաղղէ այդ յոյսի  
Իրագործում ցնծառիթ:

« Նորանցն է բախտն ու թողնենք  
Իրաւունքից օգտուին.

« Երախտապարտ եմ սակայն  
Ես բարեւէր այն մտքին

« — Լինի դա քո կամ այլոց —  
Որ ինձ արեց արժանի

« Խոստովանուիլ դէմ առ դէմն  
Այսքան շքնաղ խորանի: »

Թէև թուայ տարակերպ —

Բայց ծայրայեղ տառապանք.

Պապուած է մերթ ցնծութեան,

Որ չէ բաշխում ըստփփանք:

Վշտի այդ խաղն ազդում չէ

Ոչ մի պատրանք ցուերիդ.

Ժրպիտ է դա դառնութեան,

Բայց և այնպէս — մի ժրպիտ:




Այսպէս բերկրել գիտեն մերթ  
Իմաստնագոյնն ու բարին,  
Ուր կախադանն արձագանք  
Տայ իսկ նոցա կատակին:

Բայց չէ հրճուանք, որի հետ  
Թուում է մօտ աղգական,  
Գուցէ խարէ դա շատ սիրա,  
Բայց ոչ երբէք սեփական:

Ինչ էլ լինէր, որ հիմա  
Մտքին փայլեց կոնրագի,  
Վայրի մի խինգ կէս բացաւ  
Կնճիուն այդ մութ ճակատի,

Եւ մի հնչիւն ցնծութեան  
Նորա շեշտերն ունէին,  
Որպէս վերջինն աշխարհում  
Որ կունենար նա բաժին —

Բայց իւր բնութեան հակառակ  
Քանզի կեանքում իւր կրճատ  
Մտքեր շունի խնայելու  
Հոգսի գուրից մթապատ:



XIV

- « Ո՛վ ծովահէն, կնքուած է  
Վրճիռն արդէն քո մահուան .
- « Քայց ինձ, իւր թոյլ բոսկին,  
Երբեմն անտում է փաշան :
- « Քեզ կուղէի խընայել . . .  
Փրկել հէնց այս վայրկեանիս ,
- « Քայց յոյսն ու ժամն, ոյժերդ իսկ  
Մեզ այդ դեռ թոյլ շեն տալիս :
- « Կանեմ քայց ինչ հընար է .  
Բոսկէն ես գէթ կուշացնեմ ,
- « Որ մէկ օր էլ դեռ շանցած  
Հնչէ պիտի կեանքիդ դէմ :
- « Մահ է մեզ այժմ աւելին .  
Ինքդ էլ շէիր կամենայ ,
- « Որ քեզ և ինձ մի դուր փորձ  
Կորուստ տանէր անխընայ : »
- « Ո՛չ, ո՛չ, անշուշտ . յօժար է  
Հոգիս ամեն մի բանի .
- « Կամ ընկել է այնքան ցած ,  
Որ անկումից վախ չունի :



- « Քեզ մի փորձիր վրտանգով  
Եւ ինձ յոյսով, որ փախչեմ
- « Մի թշնամուց, որ կանգնել  
Պարող շեղայ նորա դէմ:
- « Ես, անկարող յաղթելու՝  
Փախչեմ արդեօք վատաբար.
- « — Միակն ամբողջ իմ խմբից,  
Որը մեռնել շուղենար:
- « Բայց մէկը կայ և մտքերս  
Այնպէս փակչում են նորան,
- « Որ փայլն իմ աչքն է ցատկում  
Նորա վայրի փափկութեան:
- « Իմ նեցուկներ այն շաւղում,  
Ուր ցարդ ունիմ ևս քայլած,
- « Սորա էին — իմ նաւակ,  
Իմ սուր, իմ սէր, իմ Աստուած:
- « Թողի վերջինն ևս վաղուց,  
Նա էլ թողեց ինձ այսօր.
- « Ինձ փշրելով՝ կատարեց  
Ծարդը ինչ կամքն երկնաւոր:

- « Ես միտք շուռեմ այսպանել  
Աղօթքներով նորա դահ,  
« Աղօթքներով՝ որ ինձնից  
Կորդէ լքման մի ստոր ահ:
- « Խըլուած է այժմ և ընդ միշտ  
Սուրս իմ ձեռքից անարժան,  
« Որ անառիկ շը պահեց  
Մի դէնք — այդպէս գովական:
- « Գերի է այժմ իմ նաւակ,  
Կամ խորտակուած: Բայց իմ սէր...»
- « Նորա համար, ո՛հ, կուղեմ  
Չայնըս յըղել դէպի վեր:
- « Ո՛հ, նա միայն իղձերի՛ն  
Կապում է ինձ դեռ երկրի.—  
« Սակայն խամրեց այժմ մի սիրտ՝  
Գերիվերոյ բան բարի:
- « Թօշնեց պայծառ մի պատկեր...»  
Թէ կ՛որ մէկն էլ սրտագրաւ  
« — Աչքըս երբէք չէր փնտռում  
Մինչև որ քեզ նա տեսաւ:»



- « Միրում ես դու ուրիշին . . .  
Բայց այդ ինձ ինչ . . . ոչ մի բան . . . »
- « Ոչինչ էլ միշտ կը լինի,  
Միրում ես բայց . . . և սրբան,
- « Որքան եմ, ո՛հ, նախանձում  
Ես այն անձին, որ ունի
- « — Սրտի համար սիրազեղ —  
Մի սիրտ նշման իրենի.
- « Որ չի դդացել թափրութիւն,  
Այն թափառում մըտային,
- « Երազելով պատկերներ՝  
Իմս է ստեղծում որպիսին : »
- « Թւում էր ինձ թէ քո սէր  
Տիկի՛ն, նորանն էր արդէն,
- « Որի համար քեզ ձեռքն այս  
Խըլեց մահից բոցեղէն : »
- « Սէզ փաշայի՛նն է իմ սէր :  
Ո՛հ, ո՛չ իմ սէրն, այդ բընան :
- « Այս սիրտ, որ էլ չի ճգնում,  
Նախ շատ, սակայն, ջանացաւ

« Նորա կրքին յարմարուիլ,  
Բայց այդ շեղաւ կարելի:  
« Ես ըզգացի ուժգնապէս,  
Ըզգում եմ այժմ աւելի  
« Թէ սէրն ընկնում չէ բաժին,  
Թէ ոչ միայն ազատին:

« Ըստրուկ եմ ես — և շատ. շատ—  
Ջրնորհագիւտ նորա ստրուկ,  
« Որ խիստ պիտի գոհ լինիմ  
Բաժանելով նորա շուք:

« Յաճախ պիտի ենթարկուէ  
Հոգիս դժխեմ այս հարցման,  
« Սիրո՞ւմ ես դու, » և այրուի  
« Երբէք », տալով պատասխան:

« Դժուար է խիստ ինձ տանել  
Նորա սիրոյ գուրգուրանք,  
« Եւ մարտակի որ շրջգամ  
Ես ապարդիւն մի զգուանք:



« Գժուար է բայց աւելի  
Կըրել սրտի այդ խորշում  
« Եւ թագցընել մի սրտից,  
Ուր նոյն գուցէ կայ զգացում:

« Ես չեմ տալիս — մերժում չեմ  
Ասնում է երբ իմ ձեռքեր,  
« Յամբ կամ արագ չէ երակս,  
Այլ պարզապէս անտարբեր:

« Եւ երբ լըքուած՝ ընկնում է,  
Ձեռքս իբրև իր անկենդան,  
« Մէկից, որին ատելու՝  
Ես չեմ սիրել բաւական:

« Յետ չեն տալիս ջերմութիւն  
Իմոնք նորա շրթունքին,  
« Իսկ մնացեալն յիշելով՝  
Սոսկում է պաղ իմ հողին:

« Թէ ճաշակած լինէի  
Ես այդ կրքի վայելքներ,  
« Որի՛ նոցա փոխարկուիլն,  
Ըզգայ զոնէ կը լինէր:

« Գրնում է նա — շեմ ցաւում,  
Ոչ էլ փնտռում — երբ դալիս,  
« Եւ շատ անգամ երբ ներկայ՝  
Ներկայ չէ նա մտքերիս:

« Կամ երբ որ ինձ դայ խոկում  
— Եւ դա ստիպում է դալու —

« Ղախըս այն է, թէ գարշանք  
Ինձ հը բերէ յետայսու:

« Ըստրուկ եմ ես այդ մարդուն,  
Բայց չը նայած պարծանքին՝

« Գերութիւնից ինձ համար  
Ղան է լինել նորա կին:

« Ո՛հ, երանի թէ նորա  
Սրտի խելառ այս գորով


« Այժմ և ընդ միշտ դադարէր,  
Կամ ուրիշին փնտռելով՝

« Իմ տառապող սիրան ու միտք  
Ազատ թողնէր յաւիտեան.

« Իսկ թէ երեկ լինէր այդ —  
Տար, կասէի, հանգստեան:



- « Այ՛ն, եթէ կեղծեմ ես  
Այժմ անսովոր փափկութիւն,  
« Յիշիր, գե՛րի, կանեմ այդ  
Որ ազատեմ ըս արիւն,
- « Ի փոխարէն այն կեանքի  
Որ պարտ եմ ըս բազուկին,  
« Եւ յետ դարձնեմ քեզ որոնց  
Սկսում ես դու թանկագին:
- « Այ՛ն, ազատ, երջանիկ,  
Դուք մի սիրով ցնծացէք,  
« Որի նրմանն աշխարհում  
Չէ պարզեուած ինձ երբէք:
- « Մընանս բարեաւ. լոյս է այժմ  
Եւ հեռանամ ես պիտի:  
« Այսօր դեռ մահ չսպասես,  
Թէև ինձ թանկ կը նստի: »



XV

Չղթ այակապ նորա ձեռքն  
Ամուր սեղմեց իւր սրտին,  
Ապա դարձաւ երթալու  
Գլուխը ծըռած դէպ դեռինք

Եւ իբր երազ գեղեցիկ  
Անհետացաւ նա արագ:  
Այստեղ էր նա, և Գոնրադ  
Նորից մընաց միայնակ:

Ի՞նչ է ընկած այդ գոհար,  
Որով փայլում է շղթան:  
Այլոց ցաւին նուիրում՝  
Մի շիթ է դա սրբազան,

Որ չէ բղխում, հիթ է ոչ  
Կարեկցութեան աղբիւրից,  
Աստուածային հայումով  
Յղկում, փայլուն և ամբիժ:



Ո՛հ չափազանց համողիչ,  
Դժբախտաբանք սիրելի,  
Կընոջ լացին հակասել  
Ո՛ւմ է արդեօք կաղելի:

Չատ լաւ դիտէ նա չարժել  
Հըզօր դէնքն այդ թուլութեան,  
Նուաճելու, փրկելու,  
— Թէ իւր նիզակ, թէ վահան: —

Ո՛հ խուսափիր դորանից,  
Կը մոլորուի խելացին,  
Կ'ընկնի ազնիւն, երբ սիրով  
Ուզէ նայել այդ լացին:

Ինչո՞ւ փախաւ մի հերոս,  
Ինչո՞ւ կորաւ մի աշխարհ,  
Կլէօպատրի աչքի մէջ  
Յուլաց մի շիթ գողահար:

Եռապետին դասելիս  
Սակայն թո՛ղ խիստ չը լինինք.  
Ո՛վ նոյն բանին չէ դոհում  
Ոչ թէ աշխարհ, այլ երկինք.

Մարդու անհաշտ ոսոխին  
Հողին յանձնում է տուգանք,  
Պնքում իրենն ու ջնջում  
Մի տարփուհու տառապանք:



XVI

Առաւօտ է. և շողերն  
Ընդդէմ նորա պատկերի  
Տոլում էին, բայց առանց  
Անցեալ օրուայ յոյսերի:

Ի՞նչ կը լինի. նա մի իբ  
Գուցէ շեղած գեռ գիշեր.  
Գլխին ագռաւը բացած՝  
Գամբանական իւր թեր,

Որին տեսնել չեն կարող  
Նորա աչքեր անկենդան:  
Գիտի մանէ արեգակ,  
Հալուին ցօղեր իրիկուան՝



Հուրջը նորա դիակի:

Մի ցօղ — խոնաւ, կենսալից,  
Թարմացնելով ամեն բան՝  
Բացի միայն նորանից:




## ՆՈՒԱԳ Գ.



„Come vedi ancor non  
m'abandona.“ Dante

Ինչպէս տեսնում ես նա դեռ  
չէ լքանում ինձ: Ծ. Թ.



### I

Քրտւրներով Մօրէյի

Սուգւում է արդ յամբընթաց,

— Եւս աւելի գեղեցիկ —

Արեւն ի մուտք մօտեցած:

Ոչ թէ ինչպէս հիւսիսում

Միջիցն աղօտ եթերի,

Այլ թէ որպէս մի հընոց

Գննդանափայլ բոցիւրի:



Հուռ անդունդի երեսին  
Սփռում է նա դեղին շող,  
Ոսկեզօծում ու վառում  
Կանաչ ալին յարագող:

Քո ծեր խարակ, Եզի՛նէ,  
Եւ, ս՛վ Իզրա, բո կղզիդ  
Ուրախութեան Աստուծոյ  
Ցօղեց հրաժեշտ այդ ժպիտ:

Միրում է նա դանդաջել,  
Փայլել երկրում սեփական,  
Թէև այնտեղ պաշտելի  
Չունի այլևս նա խորան:

Արագ՝ լեռան ըստուերներն  
Իջնում, համբոյր են տալիս,  
Ծովախորշիդ փառաւոր,  
Անպարտելի՛դ Սալամիս:

Հագան լաղուարտ կամարներ  
Մի ծիրանի մթագին,  
Հանդիպեցան երբ հեռուից  
Նորա փափուկ հայեացքին:

Քշուած նոցա ծայրերով՝  
Յայտնում են մեզմ երանգներ  
Ուրախ ընթացքն արևի  
Գոյներ առած երկնաստուեր:

Մինչև ծածկուած նորանից  
Իսպառ երկիր և ովկիան՝  
Ննջում է նա խոր բլնով  
Ժայռի ետևն իւր Գեյֆեան:

Գունատ էր նա երբ այստեղ  
Նոյնանըման իրիկուն,  
Վերջին անգամ, ո՛վ Աթէնք,  
Նայեց դաւակդ իմաստուն: \*)

Ինչպէս էին անձկութեամբ  
Աղնուագոյն քո որդիք  
Գիտում նորա հրաժեշտի  
Ճառագայթներ անգորրիկ:

Ճառագայթներ՝ որոնցով  
Նոցա սղանուող վարպետի  
Գոցուեց մի օրն, երբ միւսին  
Էլ չը հասնէր նա պիտի:

\*) Սոկրատին է ակնարկում: ծ. թ.



Գեա սչ, գեա սչ, քրտարին  
Կանգ է առել արեգակ,  
Անդին բոսէն քաժանման  
Չահուս է գեա ժամանակ:

Տըխուր է բայց նորա լոյս  
Այն աշքերին վշտալի. —  
Եւ մութ՝ լիրան երանդներ,  
Երբեմն այնքան հաճելի:

Կարծես թախիժ է սփռում  
Երկրի վերայ գեղատես,  
Ուրաւեղ ֆէրուս նախ քան այդ  
Չէ խոժոռել իւր երես:

Բայց չէր իջել նա գեա ևս  
Կի՞թ երանի գլխից ցած՝  
Բաժակն ըմպուած է մահուան,  
Ոգին ի վեր սուտանած:

Նորա, որ վախ ու վախուստ  
Քամահրելով համօրէն՝  
Ապրից, մեռաւ ինչպէս այլք  
Ապրել, մեռնել կարող չեն:

Բայց արդ լեռնից ճիմեառու  
Մինչև 'ի սփիւռ դաշտերի  
Իւր պետութիւնն ընդլայնեց  
Լռիկ դշխոյն գիշերի:

Չըկայ շոգուց մ'թաղին  
— Գուշակելու փոթորիկ —  
Մի քող՝ անոյշ այդ դէմքին,  
Գօտի՛ նորա բոլորաիբ:

Ճերմակ սիւներ ու քիւեր  
Պարող լոյսից փայլելիս՝  
Երախտապարտ այդ շողին  
Այնտեղ ողջոյն հն տալիս:

Եւ մշտապէս դողդոջուն  
Ճաճանչներով շրջափակ,  
Մինարէթի գագաթին՝  
Ահա նորա նըշանակ:

Ծառաստաններ ձիթենու  
Լայն ու մըթին սըփրուած՝  
Հոսում է ուր Սէֆիտու  
Մեկաւաշօրդ ու կամայ:



Տխրագղեցիկ նոճիներ  
Մզկիթներում սրբազան,  
Եւ սրտաբաց քեօշկերի  
Աշտարակներ ցոլական:

Եւ մութ կանգնած ու մլուալ  
Սուրբ վայրերում այդ անդորր,  
Մերձ տաճարին Թէսուսի  
Արմաւենին մենաւոր:

Աչք է գրաւում ամեն բան  
Իւր գոյներով բազմաստուեր,  
Եւ ով անցնէր անըզգայ  
Նորանն ապուշ կը լինէր:

Էլ ոչ հեւուից լսելի՝  
Գարձեալ տհա Եզէան,  
Հանգիստ տալով գոռ կուրծքին  
Պատերազմից տարրական:

Նորից մեղմիկ գոյներով  
Երկար շարքեր այլիբի  
Սըփռած ունին ի հանդէս  
Չարժուն շափիւղ\*) ու ոսկի,

\*) Չափիւղայ կամ շամփիւղաւ բառի կոչւածումն է: Ծ. Թ.

Խառն կղզիքի հեռաւոր  
Երանգներին բազմադան.  
Կղզիք — խոժոռ գէճքերով  
Ժպտում է սինչ հեղ ուկիտան:



II

Ո՛չ այժմ երգ լի՛մ — միտքս ինչո՞ւ  
Դառնում է թեղ անընդհատ:  
Ո՛վ է կարող, և սակայն,  
Տեսնել քո ծով հարադատ,

Եւ չը յիշել քո անուն —  
Ի՛նչ էլ պատմում լինի նա:  
Այդքան հրամայր մեղ համար  
Պիտի նա միշտ ունենայ:


Ո՛վ է գիտիղ արևի  
Տեսել մանող շառափներ,  
Եւ մոռացել, ո՞վ Աթէնք,  
Երեկոյեան քո պատկեր:



Ո՛չ նա, որի մաքրելից  
Քո շին ջնջել յիշատակ,  
Ո՛չ յուշաւեր անջրպետ,  
Ո՛չ յուշասրօղ ժամանակ.

Որին պահում ես դերի  
Ո՛վ խմբողկոյզ Սիկլադիա:  
Խորթ չէ թուամ, և այնպէս,  
Եյս մեծարանք իմ լարիս—

Ճէնի կողին այս երգի  
Քանդ էր, մի օր, սեփական.  
Ո՛հ թէ նայնպէս լինէր այժմ,  
Եւ դու՛ ապա յաւիտեան:



III

Մաւ արկն, ու սուղուեց  
Քան գիշերն այդ՝ մըթագին,  
Մաղորայի սիրար հէզ  
Նրշան — լոյսի բարձունքին:



Ահա երսրդն էլ անցաւ  
Օրը նորա մենութեան,  
Այնուհանդերձ չէ գալիս . . .  
Զէ ուղարկում . . . դաւաճան:

Զը կայ նըշան փոթորկի.  
Թոյլ բայց յաջող է քամին,  
Երեկ դարձաւ Անսէլմոն,  
Նա չէր տեսել Կոնրադին:

Թէև վայրի՝ որպէս այժմ,  
Այլ ելք կանէր այս բերթուած,  
Եթէ միակ այդ նաւին  
Լինէր Կոնրադ ըսպասած:

Հովն իրիկուայ թարմացաւ —  
Իսկ օրն իբուն Մադոբան  
Գիտեց, Յոյսին, իբրև կայմ՝  
Ինչ որ եկաւ երևան:

Վերում նստաւ տրամալից,  
Եւ վերջապէս տնհամբեր՝  
Դէպի ծովափ մըթապատ  
Ուղղեց մոլար իւր քայլեր:



Այնտեղ երկար թափառեց,  
Անհող դէպի այն փրփուր,  
Որ ցօղելով փախցընել  
Ուղեց նորան, բայց իզմէր:

Նա ոչ տեսաւ, ոչ ըզգաց,  
Ոչ յանդգնեց հեռանալ.  
Յղը նա ցուրտ շէր սեպուճ  
Սիրան էր նորա սառուցեալ:

Քիչ, քիչ նորա մարերի  
Երկրայալից թափառում  
Փոխուեց, դարձաւ այնպիսի  
Չարագուշակ համոզում,

Որ թէ նորան՝ կենդանի  
Գար այժմ Կոնրադ երևան,  
Կեանք ու դգացում նորանից  
Գուրս կը ցնցուէր սնխափան:

Եւ դա եկաւ վերջապէս  
— մղորմ մի նաւ կիսաւեր,  
Եւ նաւառափն տեսաւ նախ  
Ում նախ տեսնել նա կուզէր:

Ոմանք արնոտ, ողջ թշուտ,  
Սոքա էին որ փախան.  
Հաղիւ գիտեն թէ ինչպէս  
Եւ չը գիտեն ուրիշ բան:

Կեցած էր լուս ամեն սք,  
Թէ այս կամ այն իւր ընկեր  
Մահուան մասին Գոնրադի  
Ինչ գոյժ պիտի գուշակէր:

Բայց կար մի բան, . . . և կարծես  
Նորա վախում լինէին  
Յայտնել իրենց ասելիք  
Մաղորայի ականջին:

Եւ հասկացաւ նա իսկայն,  
Բայց չը գողաց ու չընկաւ  
Ծանրութեան ասկ իւր վշափ  
Եւ հարուածից անիրաւ:

Այդ հեղ, չընաղ կողմի մէջ  
Վեհ ըզղացմունք կային շատ,  
Որոնք ի գործ պէս չարթնած  
Մընում էին աննըկատ:



Մինչդեռ կար յոյս, մեղմանում

Լալիս էին թրթռուն,

Գալ երբ շը կար՝ մեղմում չէր

Քրնում էր այդ փափկութիւն.

Եւ այդ քրնի սրնարքին

Պանդնեց ոյժն այն որ անայ—

« Ի՞նչ կայ վախի, երբ սիրոյ

Քեզ ոչ մի բան չէ թողում: »

Քրնականից տառել,

Նրման ոյժին տառալից,

Որ դռանցանքն ամփոփել

Իրաէ սասաիկ ջերմախափից:

« Լուս էք, բայց ո՛չ, ձեր լրին

Կարիք շունիմ ես բընաւ:

« Մի խօսեցէք . . . մի շնչէք . . .

Ես հասկացայ . . . և շատ լաւ:

« Մէկ հարց միայն . . . բայց կարծ եմ

Սյրւում լինի իմ բերան,

« Ո՛ւրտեղ արդեօք ը . . . նկաւ նա.

Իսկոյն, իսկոյն պատասխան: »



Տիկին, մենք այդ շք դիտենք:  
Հազիւ փախանք կենդանի,  
« Բայց մէկն այստեղ չէ կարծում,  
Որ ըստանուած նա լինի:

« Տեսաւ նորան նա կապուած  
Արնոտ, սակայն ոչ անկեանք... »  
Խեղճ կինն արդէն շէք լսում.  
Ջուր էր այլևս ամեն ջանք:

Ցնցուեց ուժգին ցարդ ամեն  
Միտք ու երակ ընկճուած.  
Հափեց իսկոյն այդ բառեր  
Նորա հոգին մթամած:

Նա տեղն ու տեղն երկրուեց  
Ու վայր ընկաւ ուշալիք:  
Գուցէ աարբեր դամբանից  
Խըլէր նորան մի ալիք,

Սակայն նորա բիրա ձեռքով  
Թէև աչքով յորդայօղ,  
Տուին ամեն օգնութիւն,  
Որ գութն ուղեց ըշտապող:



Նորա դէմքին մահատիպ  
Սըրսկում են ջուրն սիկիանի,  
Բարձրացրնում, հովհարում,  
Մինչև արթնեց կենդանի:

Նաժիշտներին ձայն տալիս,  
Յանձնում կանանց խընամքին  
Տըկար այն կազմ, որի վրայ  
Նայում էին տրամագիւն:

Եւ պատմելու դարձան արդ  
Անսէլմոյի բնակարան,  
Մի պատմութիւն՝ խիստ տաղատուկ,  
Երբ կարճ՝ ընթացքն յաղթութեան:



IV

Խիստ անսովոր ունեցաւ  
Խօսքեր, վայրի այդ ժողով,  
Փախցրնելու, փրկանքի  
Եւ վըրէժի մտքերով:

Թէ ոչ փախուստ կամ հանդիստ  
Խօսուեց ուրիշ ամեն բան,  
Այնտեղ հոգին Կոնքաղի  
Մուտքը գոցեց դեռ լքման:

Ինչ էլ նորա վիճակն արդ՛  
Այն քաջ կուրծքեր առնակաղմ,  
Որ խրախուսեց ու փարեց  
Կոնքաղ դէպի սրտակրաղմ

Պիտի փրկեն, թէ նորան  
Գանեն դեռ ևս կենդանի,  
Եւ նորա ստուերն ամօրեն  
Եթէ մեռած նա լինի:

Քայ գայ նորա թշնամուն.  
Գան դեռ մի բուռ կոռուողներ—  
Սրտով՝ նայնչափ նուիրուած,  
Որչափ գործով՝ անփեհեր:





Քիչիկա՞ն մտաբան հարցանի  
Մայրսրբանցս մը՛նչի՛ն զարուհի  
Վերջի՛ն զարուհիս  
Մայրսրբանցի՛ն զարուհիս

Մըռայլ փաշան հարէմուն  
Քաշուած սենեակ մեկուսի՛  
Խորհում է միշտ թէ գերուն  
Վճռէ պատիժ որպիսի:

Նորա մտքեր անդադար  
Հափում էին սէր ու սխ,  
Գէպի Կոնրազ կամ Գուլնար  
Գառնում էին փոխ առ փոխ:

Այստեղ, նորա ոտքի մօտ,  
Յենունած է սարուին անուշիկ,  
Գիտում ճակատն, ուղեւոր  
Վանել դորա փոթ որիկ:

Սև ու խոշոր այն աչքեր,  
Նայում քներով անձկալից,  
Զուր են փորձում համակրանք  
Կորդել նորա պատկերից

Թեքուած վերան համբիշի  
Մըռայլ Սէյիդն արտաքուտ՝  
Կալանաւոր իւր պոհի  
Մահն է դիտոււմ 'ի ներքուստ:

« Փաշա՛, պըսակն յաղթութեան  
Պճնեց այսօր քո ճակատ.

« Ընկաւ դաշտում այդ հրոսակ,  
Գերին է քո և՛ Կոնրադ:

« Արդարագատ քո վճռով  
Արժան է նա որ մեռնի,

« Սակայն շնչին շափազանց՝  
Չէ նա ռիսիդ արժանի:

« Թէ փրկանքի փոխարէն  
Ազատ թողուէք քանի որ,

« Դա քեզ մեծ շահ կը բերէք  
Նորա գանձով այդ բոլոր:

« Ըստ ասութեան՝ անհաշիւ  
Ունի նա ինչք և աւար,

« Լաւ կը լինէր որ տէրն իմ  
Այդ ամենին տիրանար:



« Այն ինչ իսպառ թուլացած  
Չարարաստիկ այս կռուից,  
« Թէ հեռեկն ու հսկե՛ն,  
Ըստ ձեռք կընկնի նա նորից:

« Բայց թէ մահուան մատնուի,  
Նորա մարդիկ նաւերով  
« Բոլորն առած կը փախչեն  
Այլ մի ծովեզր ապահով:»

« Ամեն կաթիլ արեան տեղ  
Թէ ինձ աային մի դոհար,  
« Որ Ըստամբօլ գտնուող  
Ամբողջ թագին արժե՛նար.

« Ամեն մազի փոխարէն  
Չուլուած ոսկու մի կոյո հանք  
« Հիմա բացուած իմ առաջ՝  
Եթէ շողար աղաչանք.

« Եթէ ինչ գոյք որ ցայսօր  
Սրարական հէքիաթներ  
« Պատմել են կամ երազել,  
Տային ինձ այժմ, կարող չէ՛ր,



« Կարողացած չէր լինի  
Յարդ ուշացնել նորա մահ.

« Բայց թէ նորան իմ ձեռքում  
Կապուած գիտեմ ես լստահ:

« Եւ վրբէժով ծարաւի  
Խորհում եմ միշտ գանկու,

« Մի ցաւ, որ շատ տանջելով  
Ըստ ուշ լինի մահացու: »

« Ո՛չ, իմ փաշա, չեմ ուզում  
Ես սանձ դրնել քո ցառման,

« Այնքան արգար՝ որ մեղմել  
Գուժը կարող չէ նորան:

« Ուզում եմ ես որ գանձին  
Դու տէր դառնաս այդ հէնի:

« Այսպէս ազատ նա թողուած՝  
Իրօք ազատ չէր լինի:

« Իւր կէս ոյժից ու հրոսից  
Այսպէս դրկուած՝ կ'սպասէր

« — Նորից քո ձեռքն քնկնելու —  
Թէ լորթ կը տաս դու պատուէր: »



« Նա կսպասէր, և ուրեմն  
Այդ թշուառին ծովահէն  
« — Թէկուղ մէկ օր — արձակեմ.  
Նորան — որ իմն է արդէն:

« Ազատ թողնեմ թշնամուս,  
Եւ սկսեմ խօսքով, և ինչսկսե  
« Քո պաղատանքն յարգելով,  
Դու նաղելի՛ խնդրարկու:

« Պարտ եմ անշուշտ ես գովեստ  
Առարիւնի քո զգացման,  
« Որ եթախախքդ է յայտնում  
Այդ գավուրի փափկութեան:

« Նա, որ սոսկ քեզ ու քոնոնց  
Փրկել ունէր նըպատակ,  
« Անհող, անշուշտ, թէ ոքքան  
Իրաւիչ էր այդ մըցանակ:

« Այժմ մի ըսպէ լսիր ինձ.  
Քո այդ քնքոյշ աղանջին  
« Մի խօսք ունիմ ասելու:  
Չեմ հաւատում քեզ, ս՛վ կին:

- « Զարտասանուած իմաստից  
Իւրաքանչիւր մի խօսքիդ,  
« Այն որ լսեց իմ կասկած,  
Կնքուամ է այժմ՝ ճշմարիտ:
- « Քոցի միջով, սէրայից  
Տարուած նորա թեքում՝  
« Կոնքադի հետ փախչելու  
Չէիր այնտեղ դանդաջում:
- « Գառասխանիդ պէտք չունիմ:  
Խօսեց արդէն բո շիկնանք  
« Դէմքիդ վերայ յանցաւոր,  
Որպէս անսուտ խոստովանք:
- « Չքնանդ տիկին, լաւ կանես  
Որ շատ բղղոյշ կենաս դու,  
« Միայն նորա կեանքը չէ  
Որ պէտք ունի հոգալու:
- « Ուրիշ մի խօսք... և . . . բայց ոչ,  
Բառեր այլևս ինձ պէտք չեն:  
« Թող անիծեալ լինի միշտ  
Զարարաստիկ այն բոպէն,



« Որ նա բոցից քեզ փրկեց:  
Լաւ կը լինէր . . . սակայն ո՛չ,

« Յետոյ ես քեզ կողբայի  
Որպէս ամբիժ մի կընոջ:

« Քո տէրն է այժմ խօսում քեզ:  
Գիտե՞ս, ըստրճւկ նենգասէր,

« Որ ես գիտեմ ե՛ խուղել  
Աստանդական քո թևեր:

« Ես սովոր չեմ բարկանալ  
Միայն դատարկ բռնեբռով:

« Քեզ լաւ նայիր, ե ոչ էլ  
Սեպիր կեղծ իքդ ասպահով: »

Սէյիդն ելաւ դժնադէմ,  
Եւ հեռացաւ նա կամաց,  
Ըսպանական հրաժեշտով,  
Եւ աչքերով կատարած:

Ա՛, որչափ թիչ գիտէր նա,  
— Տէրն այդ կանանց — որ ցասում  
Նորանց ընկճել չէ կարող,  
Ու սպաննալիք չէ դատում:

Եւ գաղափար շունէր նա  
Ինչ է քո սիրտ, սիլ Գուլնար,  
Որ գայրացած՝ ինչ կիշխէր,  
Եւ փափկելիս՝ ինչ կըզգար:

Զրպարտական համարեց  
Նա փաշայի կասկածներ.  
Ի՛նչ էր արմատն իւր գուլթի —  
Ինքն էլ, գուցէ, չը գիտէր:

Ըսարուկ էր ինքն, ու գերուն  
Ընկերարար պարտական  
Անշուշտ ինչոր համակրանք  
— Անուամբ և եթ աննրման:

Քամահրելով ամեն վախ՝  
Գիտով դեռ ոչ գիտակից,  
Վրտանգաւոր նոյն ճամբով  
Գընալ իշխեց նա նորից:

Նորից ցասման հանդիպեց,  
Մինչև արթնեց նորանուամ  
— Աղբիւր կանանց օղէտի —  
Մտքի որոշ մաքառում:

---



VI

Նոյն միջոցին անձնալից,  
Երկարասև, տաղտկարեր,  
Միշտ միակերպ սողացին  
Բանտում, ցերեկ և գիշեր:

Գիտէր ընկճել զարհուրանք  
Նորա հոգին առնացի.  
Բայց սոսկալի միջոցն այս,  
Միջոց՝ լափող կասկածի,

Որի ամեն մի ըռպէն  
Կարող էր գալ ու վճաել  
Նորա համար մի վիճակ —  
Մահից դժխեմ առաւել.

Երբոր ամեն բայլի ձայն  
Լսուած դրրան ետեւից՝  
Գուցէ նորան կը տանէր  
Գէպի տապար կամ թէ ցից.

Երբ ինչ շշուկ որ դարկէր  
Քանտարկեսալի ականջին,  
Կարող էր և՛ համարուիլ  
Նորա համար մի վերջին . . .

Գիտէր ընկճել դարհուրանք.  
Հողին այդ վէս ու դաժան  
Ցոյց էր եկել անյարմար  
Եւ դժկամակ մահացման:

Յոգնել էր այժմ, կամ մաշուել —  
Սակայն լռիկ նա տոկաց  
Այդ մարառման — մահացու՝  
Քան ամեն ինչ նախընթաց:

Քամու մըղումն անհամբեր,  
Կռուի յուզում տենդահար  
Չէին թողել մէկ հատ միտք —  
Այնքան պարտա՛ որ սոսկար:

Սակայն այսպէս միայնակ,  
Չղթայակապ ու ստիպուած  
Թօշնիլ իբրև անճար դոհ  
Ամեն փոխուող մի բըմաց.



Նայել սրտին աւփական  
Եւ որոճայ անօգուտ  
Անդառնալի քո մեղքեր  
Եւ քո վախճան մօտալուտ.

— Ուշ՝ խոյս տալու վերջինից,  
Կամ շրտկելու առաջին —  
Հաշուել ժամեր, որ անդուլ  
Մօտ են սողում քո վերջին.

Առանց մէկի բարեկամ,  
Որ քեզ լինի քաջալեր  
Եւ կամ պատմէ, որ մահուան  
Դու տոկացիր անվեհեր.

Ընթացի բռնած թշնամիք,  
Որ սըտերով դանադան  
Ուրախ լինին աղարտել  
Կեանքիդ վերջին տեսարան.

Դիմացդ անլուր տանջանքներ —  
Որոնց յօժար քո հոգին  
Վստահ չէ թէ հանդուրժել  
Կարող է թոյլ այս մարմին.

Գիտակցելով թէ մէկ ճիշ  
Արատ է քո քաջութեան —  
Քո համբաւիդ այդ միակ  
Եւ սիրելի գրաւական.

Թէ չեն աայ քեզ երկնքում  
Կեանքն ինչ այստեղ թողեցիր,  
Երկնից սիրոյ մենաշնորհ  
Վայելողներ գթալիր.

Եւ քո գրախաւից անըստոյդ,  
Քեզնից խլուած՝ աւելին,  
Այն է երկնքդ երկրաւոր,  
— Քո մէկ հասիկ սիրելին . . .

Ահա թէ ինչ մտքերի  
Պէտք էր հէնին հանդուրժել,  
Եւ դիմանալ ցաւերի  
Քան մարդկայինն առաւել:

Եւ հանդուրժեց նա դորանց.  
Արժէ պատմել լաւ թէ վատ.  
Այն ինչ էլի մի բան է  
Դեռ չընկճուիլ յուսահատ:



VII

Օրն անց կացաւ առաջին —  
Նա չըտեսաւ գեղանունս:  
Անցան երկրորդն ու երրորդ —  
Դարձեալ շեկաւ այցելունս:

Ինչ կինն ասաց՝ կատարեց  
Նորա հրմայքն երևի,  
Թէ ոչ Կոնրադ շէր մէկ էլ  
Տեսնի երեսն արևի:

Չորրորդ օրն էլ անց կացաւ —  
Ահա բերին նոյն գիշեր  
Մի փոթորիկ ու խաւար  
Իրենց խառնակ սոսկանքներ:

Ինչպէս ականջ էր կախում  
Նա ովկիանի գոռալուն,  
Որ շէր բընաւ խանգարել,  
Առաջ, այսպէս նորա քունս:

Վայրիագոյն բաղձանքներ  
Կաղմեց հոգին այդ վայրի,  
Մըռնչիւնովն արթնացած՝  
Քաջածանօթ իւր տարրի:

Նեծած ունէր շատ անգամ  
Նա թեւաւոր այդ կոհակ,  
Սիրած՝ նորա կոպտութիւն,  
Թափի համար ճեպունակ:

Եւ արդ հնչեց ականջին  
Նորա ճաթիւն թնդորոտ,  
Վաղուց ծանօթ — սակայն այժմ,  
Աւանդ, իղձիւր այդքան մօտ:

Ունաց քամին բարձրաձայն  
Եւ բարձրաձայն կրկնակի  
Ամպրոպն, ահա, դըրըրդաց  
Գլխի վերին օթեակի:

Ջողաց կայծակն ու փայլեց  
Երկաթացանց պատուհան,  
— Աստղից՝ միջին գիշերուայ,  
Նորա համար դուրեկան:



Քաշեց մօտիկ ձողերին  
Իւր շղթայի ծանրութիւն  
Եւ այն յոյսով որ չ'իցէ  
Վրտանգն անցնէր ապարդիւնս

Երկինք ուղղեց աղօթքով  
Երկաթակապ իւր ձեռքեր,  
Որ մի բարի շանթ ջնջէ  
Նորա ստեղծած այդ պատկերս

Մի շանթ՝ այդ շար աղօթքով  
Եւ պողպատով հրաւիրուած—  
Բայց փոթորիկն անց կացաւ  
Ու չք զիջեց մի հարուած:

Չայնն հեռացաւ ու լռեց:  
Նա զգաց անոք ու մենիկ—  
Խնդիրքն, ասես թէ, մերժեց  
Մի բարեկամ պարտալիք:



VIII

Անցաւ արդէն կէս դիշեր.

Լսեց դալիս նա դրսից

Թեթև մի քայլ. դա կեցաւ.

Ահա շարժուեց դա նորից:

Գանդաղ դարձան փականքներն

Աւ դժկամակ բանալին:

Ինչպէս ըզգաց նորա սիրտ՝

Նա էր — շքնաղ այն ուհին:

Որքան էլ կինն անձանօթ

Չատ յանցանքներ ունենար՝

Գարձել էր այժմ Կոնրադին

Նա պահապան բարերար:

Մատղաշուժեան թարմութեամբ

Սյնքան շքնաղ մի տիկին...

Ճգնաւորի յոյսը լոկ

Գիտէ ստեղծել այդպիսին:

Բայց բանտն եկած օրուանից

Փոխուած էր խիստ այցելուն.

Գէմքն՝ աւելի գունազուրկ,

Կազմն՝ աւելի դողգոջուն:



Աչքը մըթին և ըշտապ,  
Գուլնար ուղղեց Գոնրադին,  
Որով, նախքան իւր լեղուով,  
Ասաց, „Մահ է քո բաժին:“

« Այ՛ս, մեռնես դու պիտի.  
Բայց մէկ կայ դեռ ճանապարհ,  
« Ամենավառն ու վերջին,  
Տանջանքն եթէ չէ վատթար:»

« Տիկի՛ն, ես այդ չեմ փնտռում,  
Ասում եմ այն ես ինչոր  
« Վերջին ահագամ ասացի.  
Նոյնն է Գոնրադ կ' այսօր:

« Ինչո՛ւ փրկես դու մահից  
Օրինազանց մի հէնի

« Եւ փոխել տաս այն վրճիւ՛  
Որին ես կամ արժանի:

« Ես փաշայի ցասումից  
Չահել եմ վարձն այդ ահեղ,  
— Եւ ոչ միայն աշխարհում —  
Իմ գործերով արնահեղ:

« Ինչո՞ւ փրկեմ ընդ մահից .

Քանզի . . . մի՞թէ դու չէիր

« Որ ինձ քան թէ գերութիւն

Վատթար բանից փրկեցիր :

« Ինչո՞ւ փրկեմ . . . և մի՞թէ

Թշուառութեամբ կուրացած՝

« Դու չե՞ս տեսնում մի կընոջ

Սրտի հակում դիւրազգած :

« Պէտք է ասեմ, թէպէտև

Ըմբոստանայ իմ հոգին,

« Ինչ որ, մի կին ըզգայով՝

Չասէ պիտի բընաւին :

« Քանզի . . . անլուր և անթիւ

Ոճիրներիդ չը նայած՝

« Իմ սիրտն առ ընդ անտարբեր

Եւ անըզգայ չը մընաց :

« Դա վախեցաւ քեզանից,

Երախտապարտ ըզգաց ընդ,

« Արգահատեց, խենթացաւ,

Եւ . . . և սիրեց վերջապէս :



« Մի տար, խնդրեմ, պատասխան.  
Վէպիդ էլ դեռ հանգիստ տուր—

« Թէ սիրում ես ուրիշին,  
Եւ սիրում եմ ես իդուր:

« Թէև սիրով նա՛ իմ սլէս,  
Կազմով՝ յաւէտ գեղանի,

« Անցնում եմ ես վրտանգից,  
Որից նա շէր յանդգնի:

« Սրտիդ համար եթէ սէր  
Լինէր նորա կուրծքի տակ. . .

« Ես լինէի թէ քո կին,  
Չէիր հիմա դու մենակ:

« Կի՛նն ըմբոստի — և ախրոջն  
Այսպէս անո՞ք է թողնում:

« Ի՛նչ գործ ունի այդպիսի  
Քնքոյշ տիկինն իւր տընում:

« Բայց խօսելով, ժամանակ  
Թող չը վատնենք մենք իզուր.

« Գլխի վերևն իմ և քո  
Մազով կախուած կայ մի սուր:

« Թէ քաջ ես դեռ, թէ փափառ  
Աղատութեան դեռ ունիս,  
« Վեր կ'անց, սոք քեզ մի դաշոյն,  
Եւ հետեիր քայլերիս: »

« Այն, այս իմ շղթայով,  
Իմ դարդարքով այս ամեն,  
« Քրնած մարդկանց վերայից  
Ոտքերս անձայն կը քայլեն: »

« Դու մոռացած կը լինիս.  
Ո՛րն է յարմար, և որքան.  
« Այդ քո գործիք՝ կռուելու,  
Թէ այս իմ սարք՝ փախստեան: »

« Թերահաւան ծովահէն,  
Իմս են բոլոր պահակներ,  
« Վարձի համար՝ ընչաքաղց,  
Ըմբոստացման՝ անհամբեր: »

« Յաւ է մէկ բառ ասեմ ես  
Եւ վայր կընկնի քո շղթան.  
« Ի՛նչպէս այստեղ կը գայի  
Սաանց այլ իմն օգնութեան: »



« Յաջող անցաւ մինչև այժմ  
Իմ ռիսակալ ծըրադիր,

« Որն եթէ շար՝ ի սէր քո  
Գործել եմ ես այդ ոճիր:

« Ոճիր — չէ դա, որ պատժէ  
Այդ ատեցեալ տիրանի

« Բաղմապատիկ ոճիրներ:

Կոնքանդ, պէտք է նա մեռնի:

« Սոսկում ես դու, բայց սիրտն իմ  
Չէ մընացել անփոփոխ:

« Զրկումս, մերժումս, անարգումս՝  
Պէտք է լուծէ նա իւր ոխ:

« Զրպարտուեցայ մի բանում,  
Որն անարգեց ցարդ հոգիս,

« Նա միշտ անկեղծ՝ թէպէտև  
Գերութեան մէջ հեծելիս:

« Այն, ժպտան, բայց շունի  
Նա մեծ առիթ հեզնելու,

« Չէի ես դեռ դաւաճան,

Եւ դեռ սիրումս չէիր դու:

« Բայց ինքն առաջ ասաց այդ.  
Եւ նախանձոտ այն էակ —

« Այն զղուելի բռնակալ,  
Որ խթելով շարունակ՝

« Գրգոււմ է քեզ 'ի կեղծ իք,  
Արժան է այն վիճակին,

« Որ ինքն է նախ կրուահում  
Իւր շրթունքով դայրազինս:

« Ես չեմ սիրել. գընեց ինձ —  
Կարծեմ տալով մի մեծ փող.

« Ինձ հետ եկաւ և՛ մի սիրտ,  
Որ նա գընել շէջ կարող:

« Եղել եմ միշտ նս նորան  
Նըլու մի սարուկ. ինքն ասաց

« Որ թէ թողնէր, ցարդ քո հետ  
Կը լինէի ես փախած:

« Սուտ է, գիտես. բայց տուժին  
Թող գուշակներ այդ նըման,

« Որսնք կօզնին հեզնելով  
Իրենց խօսքի կատարման:



« Ոչ էլ նա մահդ ուշացրեց  
Իմ յարգելով աղերսանք,  
« Այլ հաճեցաւ պարգևել  
Քանի օրուայ քեզ մի կեանք,

« Որպէս զի լաւ պատրաստէ  
Վրհաառութիւն ինձ համար,  
« Եւ քեզ՝ կեանքից զրկելու,  
Նոր տանջանքներ չարաչար:

« Իմիս էլ է նա սպառնում.  
Բայց գուցէ իւր ծերութեան  
« Հաճոյ լինի պահել դեռ  
Ինձ իւր կամքին տիրական:

« Իսկ երբ յոգնեց ինձանից  
Ու հրապոյրիցս անցաւոր,  
« Այստեղ բըսակ կայ մի բաց,  
Այնտեղ ովկիտն կայ մի խոր:

« Ի՞նչ եմ ուրեմն, ես մի ի՞ր,  
Զառամութեան խաղալիք,  
« Որ զէ՛ն ձրգեն երբ մաշուի  
Նորա սակեայ պաճուճիկ:

« Սիրեցի բեղ, վճռեցի  
Փրկել կամբով իմ անխախտ,  
« Թէ ոչ միայն ցոյց տալու  
Թէ չէ մի սարուկ ապերախտ

« Բայց իմ կեանքիս ու պատուիս  
Թէ նա սպասնած չը լինէր,  
( Եւ լաւ գիտէ նա պահել  
Կուուամ արած երդումներ, )

« Կազատէի բեղ դարձեալ.  
Բայց դեռ խնայեց բեղ փաշանս  
« Քոնդ կմ ահա, և ինձ այժմ  
Ձի վախայնի ոչ մի բանս

« Ինձ շես սիրում. ծանօթ շես.  
Գուցէ սեպես մի վատ կին.  
« Աւանդ, այս սէր և այդ ոխ  
Ձեռն իմ՝ թէ ոչ առաջինս

« Ո՛հ, թէ կարող լինէիր  
Սիրարս փորձել ճշմարիտ . . .

« Արևելցու նորա հուր  
Վախ չէր ազդի բո սրախդ:



« Հայր, որ իբրև փարոսի  
Քեզ փրկութեան մի ճըրար  
« Ցոյց է տալիս հէնց հիմա  
Խորշում, Մէյնոտ մի նաւակ:

« Բայց կայ քընած մի սրահում,  
Ուրկից պէտք է մեզ անցնել,  
« Մէյիդ փաշան բռնաւոր:  
Պիտի շարթնէ նա մէկ էլ: »

« Գուլնար, Գուլնար, մինչև այժմ  
Չէի զգացել ես քընաւ  
« Ինչքան ընկած է իմ բախտ,  
Ինչքան խամբած՝ իմ համբաւ:

« Ոստին է իմ այդ փաշան.  
Եւ նա ջնջեց իմ բանակ  
« Հրդօր ձեռքով և անգութ,  
Բայց մի կուում բացարձակ:

« Դորա համար իմ նաւով  
Ես սըլացայ նորա դէմ,  
« Որ իմ սըրով աղմական  
Հարուածողին հարուածեմ:



- « Յայանի սուսերն է իմ գէնք,  
Եւ ո՛չ դաշոյնն այդ գաղանի.
- « Նա որ կընսջ խընայէ՝  
Քընած մարդուն շի սպանի:
- « Քեզ փրկեցի հաճութեամբ —  
Ո՛չ, որ աշտպէս անես դու.
- « Թէ սրխալ էր այդ իմ գործ —  
Ինձ մի ստիպի խորհելու:
- « Մընան բարեաւ, այժմ և միշտ  
Խաղաղս՝ իմ թա կուրծքին...
- « Գիշերն անցաւ հանգստեան —  
Ղերջինն է իմ երկրային: »
- « Քընիր, քընիր, լոյսի հետ  
Քո մըկանունք ջրղածիդ
- « Պիտի ցնցուին, գալարուին  
Պատրաստ ցըցի բոլորտիր:
- « Հրամանն արդէն լսեցի,  
Տեսայ — բայց էլ չեմ տեսնի,
- « Քանզի եթէ մեռար դու,  
Ես չեմ մընայ կենդանի:



« Իմ սէր, կեանք, ոխ, ինչ ունիմ  
Ես աշխարհում այս համայն

« Իրուած են այս գործի մէջ —  
Իս մէկ հարուած է միայն:

« Զուր է փախչել առանց այդ.  
Մեղ խուսափել չէ հրնար

« Հալածումից շեշտակի:  
Զրկանքս էլ դեռ անվրճար . . .

« Իմ վատնուած այսքան կեանք,  
Իմ թարմութիւնն անարգուած

« Եւ մեր վախերն ապագայ  
Զնջէ պիտի մէկ հարուած՝


« Բայց թէ գաշոյնը սրբից  
Պակաս է քեզ զիւր գալիս,

« Ես կը փորձեմ կանաչի  
Ոյժը արկար բազուկիս:

« Պէտք է շտապել — մէկ բռպէ՝  
Եւ ամեն բան վերջացաւ:

« Կը հանդիպենք, ծովահէն,  
Եպահովուած կամ բրնաւ:

« Եթէ շեղուեց իմ թոյլ ձեռք  
Ամպերն, ապա, վաղորդեան  
« Պիտի ստուերեն պատանն իմ  
Եւ քո պատրաստ կախաղան: »



IX

Դեռ պատասխան չստացած  
Նա շքրացաւ սենեակից,  
Հեռուն՝ Կոնրադ հետեւց  
Նորան աչքով անձկալից:

Ըստ կարելոյն հաւաքեց  
Իւր շղթայի օղակներ  
— Որ կարճանար իւր կապանք,  
Եւ շատ աղմուկ շք հանէր —

Եւ հետեւց, գանկելով  
Դռներն անփակ իւր դիմաց,  
Արագ, որքան թոյլ կը տար  
Նորա մարմին կաշկանդուած:



Ո՛ւր էր ասնում — չը գիտէր —  
Անցքն այդ ոլոր ու մըթին:  
Ո՛չ զինուորի, ո՛չ լոյսի,  
Չը հանդիպեց նա ճամբին:

Մըշուշային և աղօտ  
Տեսաւ հեռուն մի շառայլ,  
Արդեօք խոնջս տայ, թէ դիմէ  
Գէպի նըսեմ նորա փայլ:

Քախտին յանձնեց իւր քայլեր...  
Ահա մի շունչ թարմութեան  
Ջարկեց նորա ճակատին —  
Որպէս օդից վաղորդեան:

Հասաւ մի անցք անտանիք,  
Յանկարծ աչքին շողշողաց  
Վերջին մի աստղ գիշերուայ  
Եւ այդն՝ արդէն կիտարաց:

Քայց նա շեղաւ ուշադիր...  
Արդ շողն ուրիշ մի լոյսի  
Գըպաւ նորա նայուածքին  
Մի սենեակից մեկուսի.

Եւ այդ շողին նա դիմեց:  
Ապա ճեղքեց մի դռան  
Փայլը տեսաւ նա ներսի —  
Եւ աւելի՛ ոչ մի բան:

Ինչ որ մի մարդ բշտապած  
Եկաւ նորան արդ ի տես:  
Նա յետ դարձաւ ու կանգնեց.  
Գուլնաբն է դա վերջապէս:

Ձեռքին դաշոյն՝ ու վերան  
Մեղքի նրչան նա շունի,  
« Զնորհիւ սրտին իւր փափուկ,  
Ո՛չ, նա սպանած չի լինի: »

Նայեց Կոնրադ ու տեսաւ  
Վայրենութիւն այդ աչքում,  
Որին յանկարծ արշալոյսն  
Ազդեց երկշոտ մի ցնցում:

Նա յետ քաշեց իւր մազեր,  
Որ սև, երկար ու ծփուն  
Քօղել էին նորա կուրծք  
Եւ կերպարանք թիրասուն:



Կարծես թերուած — քիչ առաջ —  
Գլուխն այդ լինէր կանացի,  
Դէպ սոսկալի տառական  
Վախի և կամ կասկածի:

Իսպառ անյայտ Գուլնարին՝  
Ի՞նչ է կըրում իւր ճակատ.  
Անգիտակից ու փութկոտ  
Ձեռքով թողուած մի արատ:

Գոյնը Կոնրադ նշմարեց —  
Եւ բաւ էր այդ յայտնութիւն...  
Ո՛հ, ինչ փոքրիկ բայց հաստատ  
Փառտ է մեղքի այդ արիւն:



X

Տեսել էր նա պատերազմ,  
Որոճացել նա մենիկ  
— Ի հատուցում իւր մեղքի —  
Տանջանքների դատակնիք:

Փորձուել էր նա, պատըժուել,  
նորա կըրած այդ շղթան  
Գուցէ նորա թեկերին  
Դեռ կը մնար յաւիտեան.

Սակայն երբէք խղճի խայթ,  
Բանտարկութիւն կամ կախ,  
Երբէք ներքին ըզգացմունք,  
Կսկիծներով բաղմաթիւ,

Ձէին ցնցել, դողացրել  
Ամեն սողուն մի երակ,  
Ինչպէս որ դա սառեց այժմ  
Կարմիր կէտից այդ միակ:

Արեան փոքրիկ այդ արատ —  
Բայց յանցաւոր այդ մէկ բիծ.  
Գեղեցկութիւնն արտաքսեց  
Ամբողջ, նորա պատկերից:

Արիւն՝ շատ էր տեսել նա —  
Գիտէր տեսնել անտարբեր —  
Բայց երբ թափէր տըղամարդ,  
Կամ երբ կուռում դա հոսէր:





XI

« Եղաւ: Մօտ էր որ արթնի,  
Բայց վերջացաւ այդ ոճիր:  
« Մեռաւ փաշան, ծովահէն,  
Եւ դու շատ թանկ նստեցիր:

« Բզճւր է այժմ ամեն խօսք.  
Պիտի շատապել մեզ իբաց.  
« Մեզ է սպասում մեր նաւակ,  
Եղաւ արդէն լուսարաց:

« Մերն են արդէն իմ շահած  
Ջինուորներից մի քանին,  
« Որոնք պիտի միանան  
Քո մընացորդ խըմբակին:

« Չայնս շուտով դօրավիզ  
Պիտի գանես իմ ձեռքի,  
« Երբոր հողից հեռացանք  
Այս ատեցեալ եզերքի: »



XII

Նա ծափ զարկեց և անցքից  
Գուրս խուժեցին իւր մարդիկ,  
— Արդէն պատրաստ փախչելու  
Ամեն մի յոյն ու խափշիկ: —

Հուռ բայց արագ կորացան,  
Նորա շղթան քակեցին:  
Ինչպէս քամին լեռների  
Ազատ է նա վերստին:

Բայց այնքան ծանր մի թախիժ  
Նստաւ օրտին Կոնրադի,  
Կարծես այնտեղ քաշն ամեն  
Փոխանցուեցաւ երկաթի:

Նի բառ անգամ չէ խօսում:  
Կընոջ լռիկ նըշանով  
Գաղտնի մի դուռ ու ճամբայ  
Բացան նորա դէպի ծով:



Քաղաքն արդէն յետ մընաց.

Ըշտապեցին ու հասան:

Ալիքն ափին դեղնագոյն

Պար է բունել ցնծութեան:

Կոնրադ երթում է հնազանդ

Կընոջ ամեն նըշանին.

Կը մատնո՛ւի, կազատո՛ւի,

— հոգ չէ նորան բընաւին:

Զուր էր ամեն դիմադրանք

Նոյնչափ, սըշափ կը լինէր,

Եթէ փաշան, կենդանի՝

Նորան պատժել հրամայէր:



### XIII

Նաւում՝ բացան առազատ.

Փըշում էր մեղմ մի հովիկ:

Որքան ունէր իւր մտքում

Կոնրադ յուշեր քննելիք:

Նա սուղուեցաւ խոկմանց մէջ,  
Մինչև բըլուրն այն ծայրի,  
— Ուր կանգ առաւ նա: գալիս —  
Հանդէս եկաւ վիթխարի:

Ո՛հ, այդ ահեղ գիշերից,  
— Թէև մի կարճ ժամանակ, —  
Մեղքի, վախի ու վշտի  
Գար էր անցել բովանդակ:

Կայմի վերից մինչ մըռայլ  
Ձրգում է սառուեր այդ բըլուր,  
Կոնրադ ծածկած իւր երես՝  
Անցնում է համր ու տըխուր:

Նա միտ բերեց ամեն զան —  
Գոնսալվոյին, իւր մարդկանց,  
Անդորացած իւր բազուկ  
Եւ յաղթուեթիւնն իւր վաղանց:

Յիշեց մենիկ, հեռաւոր  
Իւր հեղ հարսին աննրման,  
Ապա դարձաւ ու տեսաւ  
Նա Գուլնարին մարդասպան:



XIV

Գիտեց Գուշնար մինչև որ  
Կարող շեղաւ դիմանալ  
Նորա գէմքին խուսափող  
Եւ հայեացքին սառուցեալ:

Եւ, աչքերին անսովոր,  
Կատաղութիւնն այդ կընտջ  
Գարձաւ արցունք, որ այլևս  
Ո՛ւշ էր թափուի և կամ ոչ:

Կինը շոքեց նորա մօտ,  
Չեարը սեղմեց Կոնրաղի —  
« Կարող ես դու գէթ ներել  
Թէև Ալլահն ինձ ատի:

« Թէ չը լինէր այդ սև գործ  
Դու այս ժամին ի՞նչ կիր:  
« Նախատիր ինձ, բայց դեռ սի:  
Ո՛հ, այժմ ինձ գէթ խընայիր:

« Չեմ ես ինչ ուր թուում եմ,  
Յայց այս գիշերն անուելի  
« Միտքս աղօտեց, գանէ դու  
Մի խենթացնիր աւելի: »

« Թէն պակաս՝ իմ յանցանք —  
Յայց թէ չէի սիրել քեզ,  
« Չէիր ապրի ուր հիմա  
Ատէիր ինձ — թէ կուզես: »



XV

Իրաւացի չէ բընաւ  
Այդ կասկածանք Գուլնարի,  
Որով ուղեց գուշակել  
Նիւթը նորա խոհերի:

Իրան է նա նախատում  
Եւս առաւել քան նորան,  
Որին շինեց ահամայ  
Մի տարւորախտ մարդասպան:



Քայց մուխ ու խոր մըտած մունքն  
— Անարտայայտ և անխօս —  
Նորա կուրծքի անձաւում  
Եւում էին արնահոս:

Քիրա շէ կոհակն ու սակայն  
Փշում է միշտ յաջող հով,  
Մըղում են նաւն ալիքներ  
Նորա յետքին պարելով:

Հորիզոնում հաղիւ թէ  
Տեսան ինչոր մի մուխ բան —  
Մի կէտ, մի կայմ, մի կըտաւ —  
Մի նաւ է դա ռազմական:

Նորա հսկող զինուորներ  
Տեսան փոքրիկ սոցա նաւ,  
Եւ մեծագոյն առադաստ  
Քամու դիմաց բացուեցաւ:

Մօտ է գալիս շարունակ  
Նա սահանքով փառաւոր —  
Նորա ցըռուկ՝ սրբընթաց,  
Նորա կողքերն՝ ահաւոր:

Փայլատակեց ինչոր բան . . .  
Մերձ նաւակին մի գնդակ  
Որոտալով անվընաս՝  
Սուլեց, մըտաւ ճըբի տակ:

Արթնեց Կոնրադ մաքերի  
Մոլորումից անըզգայ,  
Չոզաց աչքում մի հրճուանք —  
Վազուց, վազուց բացակայ:

« Իմն է կարմիր այդ դրօշակ . . .  
Իմս է . . . կրկին և կրկին . . .  
« Չեմ ևս խաղառ լըքանուած  
Եղատ ծովի երեսին: »

Առան սոցա նըշանակ,  
Չայնին տուին պատասխան,  
Ցաց դրուեցաւ մի մակոյկ,  
Ասագասաներ թուլացան:

« Կոնրադ, Կոնրադ », լսուեցաւ  
Մի գոչ նորեկ այդ նաւից.  
Ոչ մի հրաման չէ զսպում  
Մարտիկներին հրճուալից:




Գիտում էին նաւաստիքն  
Ինչպէս հըպարտ ու թեթև,  
Նաւի կողքով սեփական  
Քայլ էր առնում նա վերև:

Քացուեց մի լայն ժպիտով  
Ամեն անտաշ կերպարանք,  
Նաւագներին հընար չէ  
Մերժել կոսլիտ մի զգուանք:

Կէս մոռացած պարտութիւնն  
Եւ իւր անցեալ վըտանգներ՝  
Ողջոյնն առաւ նա նորանց  
Ինչպէս մի պետ կողջունէր:

Անսէլմոյին ձեռք տուեց  
Մի ջերմ սեղմամբ ու վայել,  
Ու զգաց որ դեռ կարող է  
Հըրամայել ու յաղթել:



XVI

Նորա հրճում՝ և՛ այնպէս,  
Յաւում էին որ նորան  
Գտան արդէն ազատուած  
Առանց կռուի և արեան:

Եկան վրէժ լուծելու . . .  
Եւ թէ լսեն որ մի կին  
Լուծեց այդ ոխ՝ կը դառնայ  
Նա այդ մարդկանց թագուհին:

Նորա, հըպարա Կանրագից,  
Պակաս էին խղճահար  
Թէ ինչ ձևով կը բանան  
Յաջողութեան ճանապարհ:

Նայուած քներով դարմացկոտ,  
Ժրպիտներով հարցական,  
Մըմընջալով ակնապիշ՝  
Նայում էին այդ կնկան:



Եւ նա, որին իւր սեռից  
Գտանք թէ ցած և թէ վեր,  
Ջրփոթուեցաւ հայեացքից,  
Որ արիւնից սոսկում չէր:

Գէպի Կոնրադ դարձրրեց  
Իւր հէգ աչքերն աղերսող,  
Մի կողմ բաշուեց լաւիւայն  
Եւ ցած թողեց նա իւր քող:

Ծայեց ձեռքերն հեղութեամբ  
Կուրծքի վերայ վշտահար,  
Որ այժմ (Կոնրադն ապահով)  
Բախտին ձգեց ինչ որ կար:

Թէև մի բան առաւել  
Յոռի բան թէ խենթութիւն  
Կարող լինէր բորբորել  
Երբեմն այդ սիրտ և արիւն,

Թէև լինէր ծայրայեղ  
Թէ բարու մէջ թէ չարի,  
Գարձեալ նորան կին թողեց  
Վատթարն ամեն մեղքերի:

XVII

Տեսաւ Կոնրադ և ըզգաց

— Միթէ չըզգալ կը լինէր —

Զգուանք գործիցն՝ ու տազնապ

Առ այդ կընտջ տանջանքն եր:

Այն՝ որ արեց, չէր կարող

Զնջիլ նորա ոչ մի լաց.

Տւ այդ՝ երկինք կը պատժէր

Իւր մի ժամում բարկացած.

Քայց արուած էր... և որքան

Լինէր ռճիւրն յոռեգոյն՝

Գիտէր Կոնրադ թէ ի սէր

Որի դարկեց այդ դաշոյն:

Ինքն ազատուեց, իսկ նորան

Զոհարեցից նա — Գուլնար

Ինչ որ ունէր աշխարհում

Կամ երկնքում կուսնենար:



Գարձաւ նա այժմ ու նայեց  
— Այն ըսարուկին աչտակ,  
Որ Կոնրադի հայեացքից  
Ծըռեց ճակատն 'ի ստորե:

Թւում էր այժմ նա փոխուած,  
Խոնարհ և թոյլ. նա ունէր  
Դէմքին գունատ մի երանդ —  
Պէսպիսութեամբ մթաստուեր:

Նորա միակ կարմրութիւն  
Այն կէտն էր սոսկ սոսկալի —  
Մի բիծ նորա ճակատին՝  
Թողուած արեամբ մեռեալի:

Ձեռքը բռնեց. դա դողաց.  
— Ուշ էր արդէն նորա դող —  
Սիրոյ մէջ մեղմ, ու ոխի՝  
Վայրենապէս դա կարող:

Ձեռքը սեղմեց. դա դողաց.  
Իւրն էլ շունէր ամբոթիւն,  
Եւ նորա ձայն կորցըրեց  
Սովորական իւր հնչիւն:

« Գուլնար » քայց նա շը խօսեց.

« Ո՛վ սիրելիդ իմ Գուլնարս—

Նորա միակ պատասխան

Նորա աշքում թո՛ղ կարդար:

Իսկոյն նորա գրիկ մէջ

Կինը նետուեց սիրալից:

Եթէ վանէր նա նորան

Հանդստութեան աշղ աւելից,

Պիտի լինէր նորա սիրտ

Բարձրը կամ ցած քան մարդու:

Բայց լու կամ վատ — շատիպեց

Նորան քաշուիլ նա հեռու:

Գուցէ — թէ վատ շունենար

Կանխադգացում իւր հոգին —

Միւսներին հեռեց

Ազնուութիւնն իւր վերջին:

Մագորան իսկ կը ներէր

Անշուշտ, համբոյրն այն անմեղ,

Որ աւելին չէր ուղում


Մէկից — այդքան հրաշագեղ:



Եւ առաջին ու վերջին  
    Համբոյրն էր դա, որ բընաւ  
Մի թոյլ բոպէն Կոնրադի  
    Նորա սիրուց գոգացաւ:

Համբոյր՝ դրուած շրթունքի,  
    Որոնց սիրոյ կիսաստուած  
Կարծես ամբողջ իւր շնչի  
    Տապը լինէր շրուայլած,

Որոնց բեկուած հառաչանք  
    Մի այնպիսի բոյր ունէր,  
Հէնց նոր էին հովհարել  
    Կարծես սիրոյ թևիկներս



## XVIII

Հասան կղզին մենաւոր  
    Վերջալոյսի ժամերին,  
Նոցա համար ժայռերն իսկ  
    Կարծես ժպտում լինէին

Նաւահանգիստան աղմկուեց  
Ջատ ձայներով ցնծալից.  
Չառւում էին խարոյկներ  
Սովորական դիրքերից:

Ցատկում էին մակոյկներ  
Խորշի դանգուր երեսին,  
Մանում ալեաց արանքով  
Գլփին ձկներ խայտազին,

Մուղիկադուրկ կըտուցներն  
Անգամ խուպոտ ճայերի,  
Սուր ճիշերով ողջունում  
Նոցա գալուստը բարի:

Իւրաքանչիւր ճըրագի  
Լոյսի ներքոյ բերկրալից,  
Որ դէպի ծովն է շողում  
Իւր ցանցկէնի արանքից,

Էակներին սիրելի  
Տեսաւ ճամբորդն իւր մարում,  
Որոնք խողաղ նստտաւ՝  
Պատրոյզն էին յարդարում:



Ի՞նչն է կարող սրբացնել  
Կեանքն առարնին այն շափով,  
Որ մէկ նայուածքը յոյսի՝  
Ծովի միջից ալեխոով:

---

XIX

Խարոյկների, տըների,  
Ջողում էին լոյս ու բոց.  
Փնտուկ Կոնրադ նոցա մէջ  
Մադուրայի լեռնամրոց:

Փնտուկ իզմիր, շեղած բան . . .  
— Եւ նրկատեց ամեն որ —  
Բոլորի մէջ՝ անճըրագ  
Միակ ցանցկէնն այդ էր լոկ:

Առաջ երբէք չէր եղել  
Նա դուրկ լոյսից ողջունի,  
Այժմ էլ գուցէ բողարկուած,  
Ոչ թէ հանգած դա լինի:

Յատկեց Կոնքադ ծովափից  
Հասած մտկոյի՛ն առաջին,  
Ջղայնարար նայելով  
Գանդաղաշարժ թիւրի՛ն:

Ո՛ւր էր որ թե ունենար  
Արծուի թեից սրբընթաց  
Եւ նետի պէս բարձունքն այն  
Լինէր արդէն ժամանած:

Հաղիւ որ թի քաշելուց  
Գողար առան նուազներ,  
Նա չոպասեց, չը նայեց,  
Եյլ ծովն ընկաւ անհամբեր:

Նա մաքառեց ալեաց դէմ,  
Ահա կանդնեց ծովեզրին,  
Եւ դէպի վեր գալարուող  
Տեսաւ ծանօթ նրբուղին:

Հասաւ դռանն ամբոցի  
Եւ կանդ առաւ մի վայրկեան,  
Ներսից շրկայ մի շշուկ . . .  
Խաւար է շուրջն ամեն բան:



Գուռը դարկեց — և ուժ գին.  
Ներսից ոչ մի քայլափոխ  
Կամ պատասխան չը յայանեց  
Թէ կար նորան ըստասող:

Նորից դարկեց, սակայն թոյլ,  
Նորա ձեռքեր դողգոջուն  
Ծանրը սրտի պահանջին  
Մերժում էին օգնութիւն:

Գուռն ի վերջոյ բացուեցաւ,  
Ահա ծանօթ մի կրես . . .  
Քայց ոչ նորա՝ որ Կոնրադ  
Գրկել կուզէր խենթի պէս:

Հուռ են շրթունքն եկուորի . . .  
Երկու անգամ հէնինն էլ  
Զուր փորձեցին աալ մի հարց  
Որ կուզէին ուշացնել:

Խըլեց լատաերն ու հիմա  
Նա կը տեսնէր ինչ որ կար.  
Քայց դա մարեց ընկնելով  
Նորա ձեռքից դողահար:

Բայց շէր կարող նա սպասել  
Մինչև վառուէր այդ ճրրագ,  
Նոյնպէս, որպէս կարող շէր  
Մինչև ծագէր արեգակ:

Սակայն տեսաւ անցքի մէջ  
Կէս լոյս ու կէս մըթամած՝  
Ուրիշ մի լամպ պլպլուն  
Գեանին ըստուեր տարածած:

Զէմքից մըտաւ սենեակի . . .  
Ահա տեսան իւր աչքեր  
Ինչ դուշակեց նորա սիրտ,  
Բայց հաւատալ ուղում շէր:



XX

Նա չը դարձաւ, չը խօսեց,  
Չընկաւ . . . նայեց անգագրում,  
Նայեց անթարթ այն կողմին,  
Որ նոր էր դեռ գողգողում:



Նայեց . . . ցաւին հակառակ՝  
Նայում ենք մենք ի՞նչ երկար...  
Գիտենք, բայց չենք ընդունում  
Թէ նայում ենք վայրապար:

Այնքան շքնաղ ու հանգիստ  
Էր նա մինչդեռ կենդանի՝  
Որ մահն իսկ այդ դէմքի վրայ  
Կարծես փափուկ տեսք ունի:

Աւելի ցաւրտ ձեռքի մէջ  
Ունի ծաղկունք ցրաաղին,  
Քանա՞՞ այնպէս քնքշաբար —  
Կալանուսով իւր վերջին:

Չէ թէ քրնած՝ այլ կարծես  
Կեղծում լինի միայն քուն,  
Եւ ծաղրելի երևոյթ  
Տալիս նոյն իսկ լացելուն:

Երկար ու սև թարթիչներ  
Կոպրերի շուրջն ըսպիտակ...  
Քաշւում է միտքն այն բանից,  
Որ կար թարուն նոցա ամէկ:

Աչքի վերան աւելի  
Ազդում է մահն ահարկու,  
Եւ խորասկում գլխիկոր  
Հողուն գահից լուսատու.

Սուղում կապոյտ շրջանակն  
Ի խաւարում մշտական,  
Բայց դեռ մի վայր խընայում  
Ձրթունքնեքի թովշու թեան,


Որոնք կարծես ժպտալու  
Թւում լինին դժկամակ,  
Եւ փափագում հանդստեան  
— Այն էլ մի կարճ ժամանակ:

Մակայն ճերմակ այն սաւան  
Եւ գէսն ամբողջ հիւսարաց,  
Երկար, սսկեայ, բայց խալառ  
Կենդանադուրկ տարածուած,

Որ նոր էր դեռ այգանում,  
— Հովին դարձած խաղալիք —  
Զսպել ուղող բայց պարտեալ  
Պըսակն իրեն բոլորալիք...



Սորա և դէմքն այն գունատ  
Ղայել են լոկ գամբանի . . .  
Բայց նա շըկայ — և Կոնրադ  
Այստեղ էլ ինչ գործ ունի:



XXI

Նա հարց շարեց. նա ստացաւ  
Ամեն հարցի պատասխան  
Մէկ նայուածքով առ այդ լուռ  
Եւ մարմարեայ կերպարան:  
Ի՞նչ հոգ է այժմ թէ ինչպէս,  
Բաւ է . . . մեռաւ Մադուրան:

Պատանութեան նորա սէր,  
Յոյսը հասուն հասակի,  
Աղբիւրն ահի նրբագոյն  
Եւ քաղցրագոյն փափագի,

Միակ այն անձ, որ ատել  
Նա շէր կարող բընաւին,  
Խըլուեց իսպառ. և Կոնրադ  
Արժան էր այդ իւր պատժին:

Քայց շէք նա դգոււմ դա պակաս:  
Գիտէ գանկել մի արդար  
Հանգիստ այնտեղ, որ շարին  
Երբէք թռչել չէ հընար:

Մի մարդ յամառ կամ հըպարտ,  
Որ աշխարհում այս ըստոր  
Ուզում է սոսկ որոնել  
Երջանկութիւնն իւր բոլոր,


Եւ չէ գտնում երկիրն այս  
Թէ ոչ մի վայր տանջանաց —  
Ամբողջովին մէկ բանով  
Տուժում է իւր ունեցած:

Գուցէ մի շէւղ լինի դա,  
Սակայն ո՞րն է այն էտի,  
Որ լուռ կերպով բաժանուի  
Իւր հաճոյքից բովանդակ:

Ըստոյիկեան շատ աչք կայ  
Եւ շատ կայ դէմք խստագին,  
Ծածկած սրտեր, որ վշտից  
Ուսանելիք էլ չունին:



Խամբած շատ իղձ կայ թաքուն  
( Ոչ թէ կորած ) ժրպիտում՝  
Ջատ քիչ յարմար այն շրթանց՝  
Ուր շատ յաճախ է ցոլում:



XXII

Ով խորն է դգում չը դիտէ  
Արտայայտել անթերի  
Ալեկոծումն անորոշ  
Պուրծքը տանջող ցաւերի:

Մի կուրծք՝ ուրտեղ հաղար միտք  
Մէկով է սոսկ վերջանում  
— Հանգիտա փնտռել բոլորից՝  
Չը գրանելով ոչ մէկում:

Գաղտնի հողին յայտնելու  
Չըկան բռներ բաւական,  
Վշտի լեզուն չէ լինում  
Ճշգրտօրէն ճարտասան:

Զարնուած հոգին Կոնրադի  
Յոգնութիւնից ծանր է խիստ,  
Եւ հարուած ի սաստկութեամբ  
Գրեթէ թմրած 'ի հանգիստ:

Այնքան թոյլ էր, որ սոսաւ  
Ըստուերն իւր մօր փափկութեան  
Նորա վայրի աչքի մէջ՝  
Լալիս, արդ իբր մի մանկան:

Թուլութիւնիցն սղեղի  
Եկաւ այդ մեղի խոստովանք,  
Առանց այն որ ամօքէր  
Մի ցաւ վատթար քան տանջանք:

Մարդ չը տեսաւ նորա լաց.  
Թէ լինէին տեսնողներ —  
Վշտի հեղեղն այդ ունայն  
Գուցէ բընաւ չը յորդէր:

Ոչ էլ երկար հոսեց դա.  
Սրբեց աչքերն իւր Կոնրադ,  
Որ հեռանայ սրաարեկ,  
Լքեալ, անոր, յուսահատ:



Ծագեց արե, բայց մութն է  
Նորա ցերեկ արամալից.  
Եկաւ դիշեր, որ երբէք  
Չերթայ ի բաց նորանից:

Չը կայ մտքի թուխալի պէս  
Այլ մթութիւն սոսկալի  
Աչքի համար տխրութեան  
— Կոյրից էլ կոյր աւելի .

Չէ յանդգնում նա տեսնել —  
Այլ դէպի սե խաւարում  
Յամառութեամբ սկեռուած՝  
Առաջնորդ էլ չէ ուզում:



### XXIII

Փափուկ կալից ըստեղծուած  
Սիրան այդ շեղուեց դէպի շար.  
Գաւաճանուած՝ շատ կանուխ,  
Եւ մոլորուած՝ շատ երկար:

Ինչպէս կաթիլ առ կաթիլ  
Ընկնում է ցօղն անձաւում,  
Նոյնպէս նաև շորացաւ  
Ամեն ազնիւ մի դգացում:

Քիչ պարզ՝ գուցէ փորձութիւնքն  
Անցան նորա երկրական,  
Սակայն սուղուած ու սաւած՝  
Վերջ ի վերջոյ քարացան:

Գիտէ մաշուիլ փոթորիկ,  
Զանթը՝ ժայռեր խորտակել,  
Այդպէս՝ եթէ նորա սիրտ,  
Զախճախուհցաւ այդպէս էլ:


Մէկ հաս ծաղիկ էր բուսել  
Ժայռի ներքև այդ դաժան,  
Մութն էր թէև քարի ստուեր,  
Բայց պաշտպանեց ցարդ նորան:

Զանթը փշրեց երկուսն էլ  
Երբ մըռընչաց փոթորիկ —  
Ծ'ւ այն զբանիտն տնսատն,  
Ծ'ւ այն շուշան քնքուշիկ:



Չը կայ բոյսից այդ փափուկ  
Մի թերթ նոյն իսկ պատմութեան,  
Նա կուշ եկած շորացաւ  
Ուր վայր ընկաւ անկենդան:

Իսկ նորա ցուրտ պաշտպանից  
Սև, սև նշխարք քարերի  
Կան ցանուցիր շորս կողմում  
Գեանի վերան անբերրի:



## XXIV

Հոյս է. և ժամն ս՛վ կիշխէր  
Խախտել նորա մենութեան,  
Թէև այսօր Գոնսալվօն  
Գիմեց նորա բնակարան:

Այնտեղ շէր նա, և ոչ էլ  
Գտան նորան ծովեզրին:  
Նախ քան զիշեր, վախեցած՝  
Կղղին ամբողջ փնտռեցին:

Մի այլ օր էլ, և մի այլ  
Փնտռում էին ու գոչում  
Մինչև խռպոտ արձագանքն  
Իսպառ յոգնեց լեռներում:

Որոնելով ամեն ծակ  
Դաշտի, լեռան, անձառի,  
Ափին գլտան ի վերջոյ  
Կարած շղթան մի նաւի:

Կենդանացաւ նոցա յոյս.  
Ջեռեցին դէպի ծով:  
Իզմէր. լուսնի ետեից  
Հուսին անցաւ երկնքով,

Բայց այդ օրից յետ չեկաւ  
Քաջ գալիս դեռ Կոնրադ,  
Եւ չէ յայտնել ո՛չ մի լուր,  
Ո՛չ մի նըշան կամ անհատ  
Թէ ո՛ւր փակուեց նա տըխուր,  
Կամ ո՛ւր կորաւ յուսահատ:



Խուճրը ողբաց շատ սրին  
Ողբալ շէին այլք կարող,  
Եւ փառահեղ նուիրեց  
Նորա հարսին մի կոթող:

Նորա համար շեն կանգնում  
Տաղանարար դամբանի.  
Անյայտ է դեռ նորա մահ,  
Գործերը խիստ դեռ յայտնի:

Թողեց հէնի նա հռչակ  
Ապագայի պատմութեան —  
Կապուած հազար մեղքի հեռ  
Եւ մէկ բարի յատկութեան:





## Ծ Ա Ն Յ Ր Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Նուագ Բ. Հասուած III. տուն 3

Ոմանք առարկել են թէ Կոնրադի ծալ-  
տեալ մուտքը որպէս լրտես բնականից դուրս  
բան է: Գուցէ այդպէս լինի: Ես պատմութեան  
մէջ կարգացել եմ մի դէպք, որ անհման չէ իմ  
պատմածին:

« Ցանկանալով անձամբ դիտել Վանդալ-  
« ների գրութիւնը՝ Մարջօրիան փոխեց իւր  
« մազերի գոյնը և յանդգնեց մտնել Կարթա-  
« գէն կատարելով իւր սեփական դեսպանի  
« դերը: Գէնսէրիկ յետայնու իմանալով որ  
« ընդունել և ազատ էր արձակել Հռովմայե-  
« ցիների կայսերը՝ խիստ տանջուամ էր ամօ-  
« թից: Այսպիսի անեկդոտը կարող է համար-  
« ուիլ անհաւանական երեակայութիւն, բայց  
« դա մի երեակայութիւն է, որ մարդիկ չէին  
« հնարի եթէ ոչ մի հերոսի կեանքի համար: »  
Գիրքն Հատ. VI, էջ 180:



Թէ Կոնրադի քարակաէրը բոլորովին  
անբնական չէ, ես կաշխատեմ ապացուցել մի  
քանի պատմական դուգադէպ հանդամանքնե-  
րով, որոնց հետ ես ծանօթացել եմ „Շուվա-  
հէնը“ գրելուց յետոյ:

« Էքքէլին գերի ընկած՝ » ասաց Ռուան-  
դինի, « աեղեկութիւններ էր հաւաքում սպառ-  
« նալից լուսթեամբ: Նա գէպի ցած էր սևե-  
« սում իւր կատաղի աչքերը և ազատ ընթացք  
« չէր տալիս իւր խորին բարկութեան: Ամեն  
« կողմից զինուորները և ժողովուրդը վազում  
« էին ցանկանալով տեսնել այդ մարդուն որ մի  
« ժամանակ այնքան հզօր էր, և ընդհանուր  
« ցնծութիւնը պայթում էր ամեն կողմից . . .  
« Էքքէլին կարճահասակ էր բայց նորա անձի  
« ամբողջ արտայայտութիւնը և բոլոր նորա  
« շարժումները ցոյց էին տալիս թէ զինուոր  
« էր նա: Լեզուն խիստ էր, կեցուածքը՝ պան-  
« ծալի, և նա իւր սոսկ նայուածքով կարողա-  
« նում էր սոսկանք ազդել ամենաքաջ մարդուն »:  
Սիսմօնդի հատ. Գ. էջ 219—220:

« Գէնսէրիկ » ( վանդալների թագաւորը  
և յաղթականը թէ Կարթագէնի և թէ չոռվմի )  
« կարճահասակ էր և ձիուց ընկնելու պատ-



« ճառով՝ կայր Նա հոգով խորունկ էր, լեզուով՝  
« սակաւախօս և բնութեամբ՝ բարկացկոտ. նա  
« արհամարհում էր զեղխութիւնը և տիրա-  
« պետելու մեծ տենչ ունէր... » Jörnandes  
de Rebus Geticis. C. 33

Ես թոյլաւուժիւն եմ խնդրում առաջ  
բերելու այս մասյլ իրողութիւնները որպէսզի  
իմ « Գեազուրի » և « Ծովահէնի » երեսը պար-  
զացնեմ. Ծ. Հ.



Տպրն. „Փ Ա Ր Ա Մ“ Թէհրան.



# Վ Ր Ի Պ Ա Կ

---

Էջ	Տող	Տպուած է	Պիտի լինի
69	9	վերջացաւ	վերջացաւ
85	9	գտսելով	գտնելով
94	4	երջանիկագոյն	երջանկագոյն
149	1	անձնալից	անձկալից





10

11

12

13

14

15

16

17







## Գ Ի Ն Ն Է

Պարսկաստանում	3 1/2 դրամ
Ռուսաստանում	65 կոպ.
Տաճկաստանում	8 դրուշ









